





# ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ

Հ Ա Յ

ԿԱՅՍՐԵՐ ԵՒ ԿԱՅՍՐՈՒՀԻՆԵՐ

ՅՅՅ-ՅՅՅ ՔՈՒԱԿԱՆԻՆ



19 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Հ Ա Ի Ա Բ Ե Ց

ՋԱՐԵՀ Ե. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Յղագր. ՋԱՐԵՀ Ե. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1909, 4. ՊՈԼԻՍ

Handwritten text, possibly a signature or stamp, located in the lower-left quadrant of the page. The text is faint and illegible due to fading and bleed-through from the reverse side of the paper.

Handwritten text, possibly a signature or stamp, located at the bottom center of the page. The text is faint and illegible due to fading and bleed-through from the reverse side of the paper.

1925. July 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՈՒՆԱԳԱՐԱՆ

ՀԱՅՈՐ Գ.


թի = 45

# ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ

## Հ Ա Յ

### ԿԱՅՍՐԵՐ և ԿԱՅՍՐՈՒՀԻՆԵՐ

### ՅՅՅ-ՅՅՅ ՅՈՒԿԱԿԱՆՆԵՐ



July 30

### 10 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

ՄԱՅՆԱԴԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ Գ. ՎՂԱՐՅԱՆԻ

Հ Ա Ի Ա Գ Ե

ԱՅՆՈՒՆ - ՀԱՅՈՐ - Գ. ՅՈՐՈՐ


ՋԱՐԵՀ Ե. ՊԵՐՉԵՐՅԱՆ

ԹԻՒ 30



Յոլագր. ՋԱՐԵՀ Ե. ՊԵՐՉԵՐՅԱՆ

1909, 4. ՅՈՒՆԻ





RECEIVED

NOV 18 1882

AMERICAN LIBRARY

222-227 BROADWAY

NEW YORK



Բիւզանդական կայսրութեան ժամանակ Հայ կայսրերու և կայսրուհիներու ամբողջական ցուցակն է. —

Մօրիկ Հայկազն [583—602], Մժեժ Գնունի [668], Վարդան Փիլիպպիկ [711—713], Արտաւազդ [743], Մարիանէ [788—795], Վարդան Թուրք [803], Արշաւիր [808], Լեւոն Ե. Հայկազն (Արծրունի) [813—820], Թէոդոսիա [813—820], Եւփրոսինէ [823—830], Թէոտորա [830—867], Վասիլ Ա. Մակեդոնացի (Արշակունի) [867—880], Լեւոն Զ. Իմաստասէր [886—912], Աղեքսանդր Արշակունի [912—913], Կոստանդին Է. Պերպեռիւժէն [913—959], Ռոմանոս Ա. Լեկաբենոս [920—944], Հեղինէ [919—961], Ռոմանոս Բ. Կրտսեր 939—1033], Յովհաննէս Զմշկիկ (Կիո ժան) [969—976], Թէոտորա Բ. [971—976], Վասիլ Բ. Պուլկարասպան [976—1025], Կոստանդին Ը. [1025—1028], Թէոտորա Գ. [1042—1056], Ռիթա [1296—1333]։

Ներկայ հատորիս մէջ խօսած ենք առաջին տասը թագակիր գլուխներուն վրայ, իսկ մնացեալներուն կենսագրութիւնները, որոնք աւելի ընդարձակ են՝ պիտի ամփոփենք կարճ միջոցի մը մէջ յաջորդաբար հրատարակելի հատորներու մէջ, որոնք առատօրէն պատկերազարդուած պիտի ըլլան։

Faint, illegible text at the top of the page, possibly a header or title.

Main body of faint, illegible text, appearing to be several lines of a letter or document.

Bottom section of faint, illegible text, possibly a signature or closing.





## ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

ՀԱՆՐԱՅԻՆ կարծիքը և առհասարակ գրագէտներու կարծիքը այն է թէ Կ. Պոլսոյ հայ գաղթականութիւնը սկըսած է կազմուիլ քաղաքին Օսմանցիներէն գրաւուելէն ետքը Սուլթան Մահմուտի հրամանով: Սակայն հիմնուելով շատ մը անուղղակի այլ բացայայտ փաստերու վրայ, կրնանք ըսել թէ Կ. Պոլսոյ հիմնարկութեան, այն է Մեծն կոստանդիանոսի կայսրութեան ժամանակէն սկսած է հայ գաղթականութիւնը ի Կ. Պոլիս, այնպէս որ հինգերորդ դարու վերջին յունական պատմագրութեան մէջ կը տեսնենք հայ ընտանիքներու յիշատակութիւնը՝ որոնք ո՛չ միայն Կ. Պոլիս, այլ նաև Ագրիանուպոլիս և Յունական կայսրութեան արեւմտեան շատ մը քաղաքներու մէջ կը բնակէին:

Բեւեռագրական նորագոյն գիւտերու նայելով, Հայաստան՝ մինչև Մեծն Ալեքսանդրի աշխարհակալութեան ատենը՝ աւատական տէրութիւն մը կը կազմէր. ամէն գուառունէր իր առանձին թագաւորը, և այդպէս շատ թագաւորներ ունէին իրենց գլխաւորը: Վաղարշակ ալ իր կանոնագրութեան մէջ ընդունեց նախարարական այս օրէնքը, որու համեմատ իւրաքանչիւր նախարար տէր կը համարուէր գաւառի մը և միայն հարկ կը վճարէր կառավարութեան: Վարչական այս դրութիւնն էր որ ի վերջոյ պատճառ եղաւ Արշակունեաց թագաւորութեան քայքայումին ու կործանումին: Այդ ժամանակէն սկսեալ կը տեսնենք նշանաւոր հայազգի զօրապետներ՝ յունական բանակին և կայսերական արքունիքին մէջ: Հին յոյն պատմիչներ մէկէ աւելի անգամներ յիշա-

տակած են որ կայսեր հրամանով՝ Կ. Պոլիս բնակող այս կամ այն հայազգի իօխանք իր հայկական գուեղով, յոյն զօրքեր եւս հետը առած, պատերազմի գացեր է Գոթացիներու վրայ, Ափրիկէի ապստամբ ժողովուրդներու վրայ, ևն.։ Այդ հայկազն իշխանները կամ նախարարները, Հայոց թագաւորութեան կործանումէն ետքը, այլ և այլ պատճառներով թողած էին իրենց աւատական երկիրները եւ եկած Կ. Պոլիս հաստատուած՝ իրենց զօրքերով։

Մեծն Յուստինիանոսի օրով Կ. Պոլսոյ մէջ կային հաստատուած բազմաթիւ հայ նախարարներ իրենց զօրքերով միասին. ասոնցմէ կը յիշենք միայն հետեւեալները՝ Ներսէս Պատրիկ Հայկազն՝ Մեծին Հայոց նախարարութենէն, Ներսէհ նախարար՝ Հայոց Բառէն գաւառէն, Երմաւոն նախարար՝ երբեմն վերակացու Պարսից արքունի հանքերուն, Արտաւան Արշակունի, Վասակ, Արտաշիւր, եւ ուրիշ բազմաթիւ նախարարներ։



Բայց Հայերը չէ թէ միայն զօրավարներ ու սպարապետներ տուած են Բիւզանդական կայսրութեան, այլ նաև կայսրեր, կայսրուհիներ, Թագակիր Օծուած գլուխներ պարգեւած են անոր։ Եթէ բուն Հայաստանի մէջ հայ թագաւորները չկրցան պահպանել հայկական թագը՝ շատ մը պատճառներով, ընդհակառակը Բիւզանդական դահին վրայ Հայը պաշտպանեց ու ազատեց իր որդեգրած հայրենիքը և հո՛ն ուր Հռոմայեցի կայսրերը պարտուած էին, Հայը հո՛ն յաղթանակեց։ Ո՞վ կրնայ երեւակա-

Մեծն Յուստինիանոս

յիւ թէ Վասիլ Մակեդոնացի անուն Հայ մը բարձրանայ Բիւզանդական աշխարհածաւալ գահին վրայ և գրաւէ զայն զաւակէ զաւակ, սերունդէ սերունդ, գրեթէ ամբողջ գարու մը տեւողութեամբ:

Այս պատմութիւններն են տհազոր կը ներկայացնենք մեր ընթերցողներուն, քաղելով մեծ մասամբ եւրոպական ազբիւրներէ, ազբիւրներ՝ որոնք մէյմէկ հեղինակութիւն կը կազմեն. աւելորդ է հետեւաբար կասկածիլ թէ այս կայսրերը իրօք Հայ են. մասնագէտ եւրոպացիներ, որոնք և ոչ մէկ շահ ունին ազգասիրական տեսակէտով, տարիներով քըններ պրպտեր են ու կը վստահացնեն թէ Բիւզանդական Գահուն այդ պարձանքները ՀԱՅ են, ՀԱՅՈՒ ԱՐԻՒՆ ԿՐԱՄ ԵՆ:

**Թագակիր Հայ Գլուխներ. —**

Մորիկ Հայկազն (583—602), Մծեժ Գեունի (668), Վարդան Փիլիպպիկոս (711—713), Արտաւազդ (748), Մարիանէ Կայսրուհի (783—795), Վարդան Թուրք (803), Արշաւիր (808), Լեւոն Ե. Հայկազն [Արծրունի] (813—820), Թէոդոսիա (813—820) եւ Եւփրոսինէ Կայսրուհիներ (823—830)

**Պատկերներ. —**

Մորիկ Հայկազն. Մորիկի դրամը. Մեծն Յուստինիանոս. Թիպէր. Փոկաս. Լեւրակլ. Կոստանդ. Կոստանդին Պուզոնատ. Վարդան Փիլիպպիկոս. Վարդան Փիլիպպիկոսի դրամը. Թիպէր Բ. Յուստինիանոս Ընչատ. Կոստանդին Ե. Կոպրոնիմոս. Իռէնէ Կայսրուհի. Կոստանդին Զ. Նիկեփոր Ա. Լոդոնէթ. Միրայէլ Բ. Թլուատ. Լեւոն Ե. Հայկազն [Արծրունի] Միրայէլ Ա. Ռէնգարէ:

**Համառօտ Կենսագրութիւններ ու Մամօրութիւններ. —**

Խոսրով Ա. Անուշիրվան (Պարսից Սագաւոր) — Լոմգարտացիք — Ավարներ — Խոսրով Բ. Բարվիզ (Պարսից Սագաւոր) — Կոստանդ Բ. (841—863) — Կոստանդին Գ. Պուզոնատ — Յուստինիանոս Բ. Ընչատ (865—895) — Կոստանդին Ե. (741—775) — Քիրսոն (Նաւահանգիստ) — Ի՞նչ է Պատկերաճարտութիւնը — Կոստանդին Զ. — Իրէնէ Կայսրուհի (780—790 եւ 792—802) — Նիկեփոր Ա. Լոդոնէթ — Նիկեփոր Պատրիարք — Միրայէլ Բ. (820—829) — Միրայէլ Ա. Ռէնգարէ:



# Կ. ՊՈՒՆՈՅ ՀԱՅ ԿԱՅՐԵՐԸ ԵՒ ԿԱՅՐՈՒՅԻՆԵՐԸ



## ՄՕՐԻԿ ՀԱՅԿԱԶՆ

[582—602]

Բիւզանդիոնի Գահին վրայ բազմող առաջին հայազգի կայսրը եղաւ ՄՕՐԻԿ ՀԱՅԿԱԶՆ, Մեծն Կոստանդիանոսէն հաշուելով Բիւզանդական իշխանութեան տասնհիններորդ կայսրը կը համարուի. ասիկա ուշադրութեան արժանի պարագայ մըն է, քանի որ տակաւին չէր հասած այն ժամանակները ուր դաւադիր զօրապետներ՝ բանակը ապստամբեցնելով կը յաջողէին գահ բարձրանալ:

Բարձրահասակ մէկն էր Մօրիկ, անուշ՝ լուրջ դէմքով, գլուխը ճաղատ՝ բայց կիսովին ծածկուած դեղձան մազերով: Ծնած է 539ին Կապադովկիոյ Արարիսոս քաղաքին մէջ (Փոքր Ասիոյ Արծն գաւառը, հիմակուան Կարինի յօտերը): Հայ աւանդութիւնը, Արազածոտն գաւառի Օշական գիւղը կամ Տարօնը կը ցուցնէ իբր ծննդավայր, սակայն առաջինը ամէնէն ստոյգն ըլլալ կ'երևի:

Մօրիկ Հայ էր հօրը կողմէ, իսկ մօրը կողմէ Հռոմայեցի: Ինք նախամեծար կը համարէր Հռոմայեցի կոչուիլ:



Մօրիկ Հայիագմ

Հայ աւանդութեան նայելով Մօրիկի հայրը Պօղոս անու-  
նով երկրագործ մըն էր: Յոյն ժամանակակից պատմիչները,  
դուցէ շողքորթութեան համար՝ անոր վրայ ազնուականու-  
թեան զրոյցներ հանեցին: Մայրն էր Յովհաննա՝ որու Ասեղ-  
րիոս եղբայրը Արարիտասի եպիսկոպոս էր, իսկ քոյրը՝ Մայ-  
րապետներու մեծաւորուհի: — Մօրիկ միակ եղբայր մը ու-  
նեցաւ՝ Պետրոսը՝ որ Փոկասի ձեռքով սպաննուեցաւ: Իսկ  
քոյրերն էին 1. Գորգիտ [ամուսնացած Փիլիպպիկոսի հետ],  
2. Թէոկտիստոս [ամուսնացած Գրիգոր իշխանին հետ], 3.  
Դամիանա [նախ ամուսնացած, յետոյ Երուսաղէմի վանքին  
մեծաւորուհի եղած]:

Մօրիկ վեց մանչ և հինգ աղջիկ զաւակ ունեցաւ. —  
1. Փլաւրոս Թէոդոս [ծնած 585ին, հինգ տարեկանին թա-  
գաւոր պատկուեցաւ, 601ին ամուսնացաւ, 602ին գլխատուե-  
ցաւ], 2. Տիբեր [Արեւմուտքի ապագայ թագաւորը, հօրը  
հետ գլխատուեցաւ], 3. Պետրոս, 4. Պաւղոս, 5. Յուստի-  
նոս, 6. Յուստինիանոս [ասոնք իրենց հօրը հետ գլխատ-  
ուեցան]: Իսկ աղջիկներն են 1. Անաստասիա, 2. Թէոկդիս-  
դէ, 3. Կղէոպատրա [ասոնք իրենց մօրը հետ վանքի մը մէջ  
բանտուեցան՝ Փոկասի հրամանով], 4. Սոպատրա, 5. Մա-  
րիամ [ամուսնացած Պարսից Պօսրով թագաւորին հետ՝ ըստ  
արար ու պարսիկ հեղինակներու]:

Մօրիկի հայրը, գիւղացի կամ ազնուական, առնական  
կրթութիւն մը տուաւ զուկին, անվեհեր հոգի մը ներշնչե-  
լով անոր: Մօրիկի կեանքին առաջին շրջանը սահեցաւ մը-  
թութեան մը մէջ զոր չեն լուսաւորած պատմիչները: Յան-  
կարծ զինքը կոմս եղած կը տեսնենք Պալատի պահապան  
զինուորներու: Ասիկա առաջին քայլը եղաւ դէպի Բիւզան-  
դական դահը, որու ճամբան յարդարեց՝ Հայաստանի մէջ  
Մօրիկի տարած յաղթանակները Պարսիկներուն դէմ:

Հայոց Պատմութեան մէջ նշանաւոր է 571ի յեղափոխու-  
թիւնը: Պարսիկ մոգերը հաստատուած էին Դուին և հոն

ատրուշան մը կանգնել կ'ուզէին: Վարդան Մամիկոնեան՝ գրգռուած ամբոխին գլուխը անցած՝ յարձակեցաւ Սուրէն մարզպանին ապարանքին վրայ և սպաննեց զայն՝ իր եղբօրը մահուան վրէժը առնելով: Յետոյ ջարդեց բոլոր մոզերը և բացէ ի բաց ապստամբեան դօշը պարզեց: Այս շարժումին միացան Վրացիներն ու Ալանները իրենց Շարուհ թագաւորին առաջնորդութեամբ:

Կարգ մը պատմիչներ այս շարժումը տարբեր պատճառի կը վերագրեն: Պարսից թագաւորը իր ազգականներէն Սուրէնը իբր մարզպան Հայաստան զրկած էր: Սուրէն իր սրիկայ բարքով թշնամանած էր նախարարներուն մեծ մասը. Վարդան Մամիկոնեան ալ զո՛ր երթալով այս գազանին՝ սպաննեց զայն, և բոլոր հայ նախարարներուն գլուխը անցնելով ապստամբեցուց զանոնք: Միւս կողմէ ընտանիքն ու զուակները Պսլիս զրկելով Յուստինիանոսէն օգնութիւն խնդրեց:

Պարսիկները միւս կողմէ անգործ չէին կենար. ահազին բանակ մը պատրաստեր էին հեծեալներու, հետեւակներու, ուղտերու և փիղերու, որ Դերենի հրամանատարութեամբ Հայաստան կը մտնէր: Ընդհարումը տեղի ունեցաւ Կաղամախի դաշտերուն մէջ: Սոսկալի պատերազմէ մը հտքը յաղթութիւնը Հայոց ժպտեցաւ:

Սակայն մէկ յաղթանակով կարելի չէր երկիրը ապահովել, որովհետեւ Պարսիկները աւելի խոշոր նոր բանակ մը պատրաստած էին Վահրամ Չուպենի առաջնորդութեամբ: Միւս կողմէ ալ Հայ նախարարներուն մէջ ըստ սովորականին անմխարանութիւն տիրած էր:

Վարդան գլմեց Կ. Պսլիս Հռոմէական պետութեան օգնութիւնը խնդրելու: Կայսրը յիշելով Տրգատի օրով տրուած խոստումը, յայտարարեց թէ ինք կ'ստանձէ Քրիստոնեաներու դատին պաշտպանութիւնը: Բայց պատերազմը ձախող գնաց Յոյներուն, Խոսրով անձամբ 140,000 զօրքերու գլուխը անցած Հայաստան մտաւ և Յոյները պարտութենէ

պարտութիւն գլտորելով՝ պաշարեց Մծրինը (\*): Բիւզանդի-  
ոնի կայսրը զայրացած այս պարտութիւններէն ետ կանչեց  
Յուստինիանոս զօրավարը և տեղը Ընդհանուր Սպարապետի  
տիտղոսով Մօրիկը Արեւելք զրկեց (577):

Մօրիկ բանակատեղին հասնելով զօրքերը կարգի դրաւ  
և բուռն թափով Արծն գաւառը արշաւեց, յաղթելով ու  
գրաւելով ճամբուն վրայ գտնուած բերդերն ու քաղաքները,  
տասը հազար զերի ալ կ. Պալիս զրկեց: Միայն Բիզանէս  
իշխանը կրցաւ պաշտպանել Խլոմար քաղաքը Մօրիկի դէմ:

Այս միջոցին Յուստինիանոս մեռ-  
նելով իրեն յաջորդեց Թիպէր (578):  
Բիւզանդիոնի քաղաքակառուցիւնը  
կ'ուզէր հիմայ աւելի հաշտ յարաբերու-  
թիւն մը ունենալ Պարսից հետ, որով-  
հետեւ Բարբարոսները՝ Բիւզանդիոնը  
Պարսից հետ զբաղած տեսնելով, սկը-  
սած էին Եւրոպայի կողմէ անաւոր յար-  
ձակումներ կատարել: Երկու մեծ թըշ-  
նամիներու հետ կուռիլը քաղաքական  
վտանգ մըն էր Հռոմէական պետութեան  
համար: Թիպէր Պարսից կուտար Հա-  
յաստանն ու Վրաստանը, փոխարէն  
խնդրելով խաղաղութիւն եւ Դարա քաղաքը: Պարսից ար-



Թիպէր

(\*) Խոսքով Ա. Ամուշիրվամ, Պարսից Սագանեան Պագաւոր, որդի  
Խօպատի. ծնած է Յրդ դարու սկիզբները, մեռած 579ին. Խոսքով յա-  
ջորդեց իր հօրը 531ին եւ զաշնակցեցաւ Յուստինիանոսի հետ, պայ-  
մանաւ որ այս վերջինը իրեն վճարէ 11,000 ոսկի իբր պատերազմական  
տուգանք: Ներքին ապստամբութիւն մը զսպելէ ետքը Բիւզանդացւոց  
հետ սկսաւ պատերազմիլ. Հիրայի Ալմուտիոյ Պագաւորը զրգուելով որ  
Յուստինիանոսի երկիրներուն վրայ արշաւէ: Խոսքով յաղթուելով կը  
պատրաստուէր Բիւզանդիոն երթալ հաշտութիւն խնդրելու երբ մեռաւ:  
Խոսքով է որ Մագղէականութեան վերջ դրաւ եւ իրանի արեւելքի կողմը  
գտնուող երկիրներուն, Ընդկաստանի հետ յարաբերութիւն մշակեց:



քան պատասխանելու տեղ, անձամբ բանակի մը գլուխը տնցած Մօրիկի դէմ քալեց: Ինքզինքը արդէն յաղթական կը կարծէր, երբ Կորդուաց լեռներուն վրայ տեսաւ հեռուէն գիւղեր ու քաղաքներ որոնք կ'այրէին Մօրիկի ձեռքով: Շահնշահը ստակաց այս յանդգնութիւնէն և չհամարձակելով հայ զօրավարին հետ չափուիլ՝ Ձիրմա գետին առջեւէն ետ դարձաւ և քաշուեցաւ Պարսկաստան, ուր սեւամազձութենէ բռնուելով մեռաւ: Մեռած պահուն կ'ընէր. «Փառքն ալ երազ մըն է... աշխարհները որոնց տիրեցի, այսպէս կը թողուն զիս ահա՛»:

Պոսրովի յաջորդեց Որմիզդ (579): Բիւզանդացիները կրկին հաշտութիւն առաջարկեցին և Թէոդորոս ու Չաքարիա Պարսկաստան ղրկեցին բանակցութեան սկսելու համար: Որմիզդ առաջնորդներ ղրկեց յոյն պատգամաւորներուն՝ որպէսզի անոնց երկար թափառումներ ընել տան, մինչև որ ինք պատերազմի պատրաստութիւններ տեսնէ: Երբ Թէոդորոս ու Չաքարիա Որմիզդի առջեւ ներկայացան, Շահնշահ պատասխանեց անոնց խաղաղութեան առաջարկին, «Հա՛կուղէր հաշտուիլ, բայց ես՝ ո՛չ երբէ՛ք. ինք իր սրով սարսափեցաւ աշխարհները, ուստի ազատ էր դանոնք դարձնելու: Բայց ինձի համար հայրենի ժառանգութիւն մըն են, մինչև վերջը պէտք է պաշտպանեմ զանոնք: Կը հաշտուիմ ձեզի՛ հետ պայմանով որ ամէն տարի կանոնաւորաբար վճարէ՛ք Յուստինիանոսի խոստացած հարկերը»:

Պատերազմի յայտարարութիւն մըն էր խիկա: Մօրիկ որ Պոլիս դարձած էր, գարնան սկիզբներ մեկնեցաւ դէպի Արեւելք: Այս անգամ իրեն օգնական ուղեւորներ Ներսէս Բ. Հայկազն զօրավարը:

Երկու հայ զօրապետները փոթորկի պէս անցան Հայաստանի սահմաններէն և մտան Մարաստան, մինչդեռ միւս կողմէ Յուստինիանոս զօրավարը սարողջ Հայաստանի տիրելով Կասպից ծով կը հասնէր և հոն Որմիզդին յաղթելով անոր գանձերը գերի կը բռնէ:

Որմիշդ էր զէնքերը դարձուց Մօրիկի դէմ, և անկէ ալ շարաշար պարտութիւն մը կրելով ստիպուեցաւ հաշտութիւն խնդրելու խոնարհիլ: Բիւզանդացիք կ'ընդունէին Պարսիկներուն բոլոր առաջարկները, բայց կը մերժէին վարդան Մամիկոնեանը անոր յանձնել:

Ուստի պատերազմը նորէն սկսաւ Բոսթանդինայի դաշտերուն մէջ: Պարսիկ սպարապետը Դոզճճի հնարգ մը մտածեց Մօրիկը խաբելու համար: Լրաբերներ զրկեց ձեռքերնին սուտ նամակներ տալով որոնց մէջ մանրամասն կ'ըսուէր թէ Պարսիկները ինչ զիբք պիտի բռնեն, այնպէս որ Մօրիկ եթէ հաւատար այս նամակներուն՝ բոլոր ծրագիրները պիտի խանդարուէր ու յաղթուէր: Լրաբերները բռնուեցան. բայց բարեբաղդարար Չաքարիա զեպանը Պարսից բանակին մէջ կը գտնուէր, մարդ զրկեց Մօրիկի որ չհաւատայ ու Բոսթանդինայի դաշտին մէջ իջնէ բանակելու: Պարսիկներն ալ նոյն դաշտը իջան և արիւնահեղ խառնուրդ մը տեղի ունեցաւ: Յոյները յաղթեցին. Թախոստը տեսաւ իր վրանէն և պարտութիւնը և զէնքերը առնելով վազեց դէպի Թըշնապաց կեդրոնը և հոն քաջութեամբ ինկաւ (380):

Կրջնական հարուածը տրուած էր Պարսիկներուն: Երբ Մօրիկ Ներսէս երկու հայկազուն զօրավարները Բիւզանդիոն դարձան՝ շրջապատուած 5000 զերիներէ, ընդունուեցան արքայ-վայել փառքով. կայսրը՝ ամբողջ արքունիքով ընդառաջ ելաւ, ժողովուրդը խանդավառութեան ցոյցեր քրաւ:

Թիպէր կայսրը արեւելեան ոճով վարձատրեց Մօրիկի քաջութիւնը՝ ազնիկը անոր հետ նշանելով: Գանի մը օր ետքն ալ Մերսահուոս անդամները, Պորհրդականները, Եկեղեցականները ժողովի հրաւիրելով հրաժարեցաւ զանէն և թագաժառանգէ զուրկ Ըլալուն Մօրիկը նշանակեց իբր յաջորդ իրեն (382 Օգոստոս 2):

Գանի մը օր ետքը մեռաւ Թիպէր:

Ժողովրդական աւանդութիւն մը տարբեր կերպով կը պատմէ Մօրիկի գահակալութիւնը:

Թիպէրի մեռնելովը զահը թափուր կը մնար: Կայսրու-  
թեան յաւակնող իշխաններուն միջեւ ահազին կռիւ մըն է  
ձագեցաւ թէ ո՛վ պիտի ըլլայ կայսր: Պատրիարքը վերջ մը  
գնելու համար այս վէճին, առաջարկեց որ վիճակ ձգեն մէ-  
ջերնին և որո՛ւ որ ելլէ՝ միւսները անոր հնազանդին: Առ-  
տուն լուսնալուն, պիտի երթային քաղաքին աւագ դուռը  
բանային, առաջին դիմացնին ելլողը պիտի բերէին պալատ  
և կայսերական թագը ձեռքը տային. որո՛ւ գլուխը որ գնէր՝  
ա՛ն պիտի ըլլար կայսր:

Յաջորդ առտուն գացին դուռը բանալու: Մօրիկը տե-  
սան որ էշու մը վրայ կանանչեղէն բեռցուցած կը ձախէր  
օրապահիկը հայթայթելու համար: Զինուորիները առին զայն,  
բաղնիք տարին, լուացին, հագուեցուցին և արքունիք բե-  
րին: Երբ Մօրիկ տեղեակ եղաւ գործին, բոլոր ներկայ ե-  
զոզներէ երգում ու գիր պահանջեց որպէս զի թագէն զրկը-  
ուածիները ետքէն չֆեսան իրեն. բոլոր իշխանները գոհա-  
ցում տուին, և կարգաւ նստեցան: Մէջտեղը կը գտնուէր  
թագը՝ գահուն վրայ դրուած և կայսերական կօշիկները:  
Մօրիկ թագը առաւ և ներկաներուն շրջանը ըրաւ կարգով,  
իւրաքանչիւրին քովը երթալուն այնպէս մը կը ցուցնէր թէ  
թագը անոր գլուխը պիտի գնէ՝ վայրկինական երջանկու-  
թիւն մը պարգեւելով: Յետոյ գնաց գահին վրայ նստաւ ու  
թագն ալ իր գլուխին վրայ դրաւ: Ներկաները սարսափե-  
ցան, բայց երգում ըրած էին թէ որու գլուխը որ Մօրիկ  
գնէր թագը՝ անիկա պիտի ընդունին իրը կայսր: Պատրի-  
արքը մօտենալով կարմիր կօշիկները հագցուց Մօրիկին ու  
առջեւը խոնարհեցաւ. միւս իշխաններն ալ իրենց կարգին  
եկան խոնարհելու և ընդունեցին զայն իրը կայսր գոչելով,  
« Կեցցէ Մօրիկ կայսրը »:

Թիպէրի մեռնելէն երկու օր ետքը տեղի ունեցաւ Մօ-  
րիկի հարսանիքն ու գահակալութեան հանդէսը: Արարողու-  
թիւնը տեղի ունեցաւ Այա Մօֆիա եկեղեցիին մէջ: Երախ-

ճանու թիւնները տեւեցին եօթն օր ու եօթը գիշեր: Հանգէսն ըէն կտքը Մօրիկ մարդ զրկեց հօրը իր գահակալութիւնը իմաց տալու և խորհուրդ հարցնելու համար: Մերունին, որ բանջարանոցին մէջ տունկեր խնամելու զբաղած էր, պատասխան չտուաւ, միայն ձեռքի դաւազանովը խոշոր կաղամբներուն գլուխները կտրեց: Մօրիկ հասկցաւ հօրը ինչ ըսել ուզելը, և կամաց կամաց ազգեցիկ իշխանները մէջտեղէն վերցուց: Պատմիչներէ ոմանք սուտ կը հանեն այս պատմութիւնը, ըսելով թէ Մօրիկի հայրը հարսանիքի ժամանակ ներկայ էր:

Քառասուն երեք տարեկան էր Մօրիկ երբ գահը բարձրացաւ: Երիտասարդական թափը հանգարտած էր իր մէջ, տակաւնտեղի ջատաղով ծանրախոհութեան. լուրջ էր ան և գոնաւորմերձեանովի. դանդաղ երեւնալու չափ խոհեմ էր. կը սիրէր կրօնքը երբ ան տէրութեան շահերուն չէր միասեր. չափազանց ազահ էր ամէն մարդկային զգացում խեղդելու աստիճան. զէնքերու սիրահար էր և գիրքերու բարեկամ: Իր առաջին գործը եղաւ զինուորական արուեստը ծաղկեցնել, անձամբ գիրք մըն ալ գրեց այս նիւթին վրայ. խրամի սովորութիւնը որ վերցուած էր՝ վերահաստատեց: Բարբարոսաց յարձակումներու առաջին առնելու համար կարքեղոնի և Հռաւեննայի մէջ բռեշխներ հաստատեց եգզարտիտիտով. ասոնք քաղաքական կառավարիչներ ըլլալէ աւելի զինուորական հրամանատարներ էին: Ասոր հետեւանքով է որ ութերորդ դարու մէջ հաստատուեցան բանակաթեմերը:

Պոլսոյ Պատրիարքը սկսած էր ինքզինքը Տիեզերական անուանել: Գրիգոր Ա. պապը (590—604) բողոքեց այդ նորութեան դէմ: Արեւելքի Պատրիարքները Հռոմի կողմը բռնեցին, և Քահանայապետը խափանել տուաւ զայն:

Քաղկեդոնի Ժողովի խնդիրը, որ երկար տարիներէ ի վեր երկպառակութեան պատճառ եղած էր Հայերուն և

Յոյներուն միջեւ, վերտաին սկսաւ յուզուիլ Մօրիկ կայսեր օրով: Արբահամ կաթողիկոս մայրական համարելով Քաղկեդոնի ժողովը, չէր ուզեր որ Վրացիները ընդունին զայն, սակայն երբ Վրացիք կիւրինի խորհրդով ընդունեցին այդ ժողովը՝ Արբահամ կաթողիկոս մեծ ժողով գումարելով նոգովեց կիւրինը, նոյով կարգաց նաև անոնց որ խնամութիւն, վաճառականութիւն և ուրիշ գործերու մէջ հազորդակցուածութիւն կ'ունենան Վրացիներու հետ: Այն ատենէն (598էն) սկսեալ է որ Վրացիները սրոյակի բաժնուեցան Հայերէն: Այս առթիւ Մօրիկ հրամայեց ժողով գումարել ի Կ. Պոլիս, և հոն հրաւիրեց Հայոց և Յունաց եպիսկոպոսները: Արբահամ կաթողիկոս զրկեց իր աթոռակալը Վրդանէս վարդապետ և Գրիգոր վարդապետ, ասոնց հետ գացին ուրիշ տասնեւինը եպիսկոպոսներ Յունաց բաժինի Հայաստանէն: Ժողովի ժամանակ Հայոց եպիսկոպոսներ ընդունեցին Քաղկեդոնի ժողովը, իսկ Գրիգոր և Վրդանէս չհաւանեցան ու ետ դարձան: Այս պատճառով մեծ չփոթութիւն ինկաւ Յունաց և Պարսից բաժինի Հայերուն մէջ որ տեւեց երեք տարի: Մօրիկ կայսրը իր բաժինի Հայերը հանեց Արբահամ կաթողիկոսի հնազանդութենէն, և զանոնք առանց կաթողիկոսի չձգելու համար՝ կաթողիկոս նշանակեց Յովհանն անուն մէկը կողաց գաւառի Բաջարոն գիւղէն. այս կաթողիկոսը կը նստէր կոտայք գաւառի Աւան գիւղաքաղաքին մէջ: Կռիւը սակայն ա՛լ աւելի սաստկացաւ երկու բաժինի Հայոց միջեւ և տեւեց մինչեւ Յովհաննի մահը:

Մօրիկի արտաքին քաղաքականութիւնը կարելի է ամփոփել մէկ բառի մէջ՝ պատերազմ: Զէնք առաւ եօթը ազգերու դէմ՝ Պարսից, Աքլաւոններու, Ավարներու, Լոմպարտացիներու, Գաղղիացւոց, Մաւրիտանացւոց և ուրիշ քանի մը մար աղգերու դէմ: Մօրիկ չունէր սակայն դիւանագիտական ոգի. երբ Պարսից թագաւորութիւնը երկպառակտեցաւ ու ներքին կռիւներու ընդարձակ ասպարէզ մը բացուեցաւ, Մօրիկ եռնար մէկ հարուածով ոչնչացնել այդ

մշտատեւ թշնամին և ըլլալ Ազեքսանդրի պէս մեծ կայսր մը, բայց չըրաւ ատիկա:

533ի սկիզբները սոսկալի հրգեհ մը մոխիր դարձուց Պոլսոյ մեծ մասը. նոյն տարին Մայիս 10ի իրիկունը ահռելի երկրաշարժ մը գետին կը տապալէր ինչ որ նախորդ հրգեհը խնայած էր:

Տարի մը հազիւ անցած էր Մօրիկի դահակալութենէն, երբ կրկին բորբոքեցաւ պարսկական պատերազմը: Յունաց սպարապետն էր Յովհաննէս Միլսթաքիոն, որու կրած յաջորդական պարտութիւնները պատճառ եղան որ Մօրիկ



Մօրիկ Հայկազնի դրամը

զինքը պաշտօնանկ ընելով տեղը Փիլիպպիկոսը ընդհանուր սպարապետ և կայսերական փեսայ ընէ (584):


Փիլիպպիկոս Միջագետք եկաւ: Մծբինի, Արծնի և Մոնոկարտի մէջ երկու թշնամի բանակները պզտիկ բաղխումներ կ'ուռնենային, ուրկէ աւելի բնակիչները կը փնտսուէին քան պատերազմիկները: Վերջնական բաղխումը տեղի ունեցաւ Սուրկոնի դաշտին մէջ: Պարսիկ սպարապետը՝ Խարզարիքս՝ մազապուր կրցաւ փախչիլ մինակը և ապաստանիլ Դարա քաղաքը:

586ին Պարսիկները նոր բանակ մը պատրաստեցին որ աւելի ուղտերու կարաւանի մը երեւոյթն ունէր: Փիլիպպիկոս զբաղած էր Խլումար բերդը պաշարելու. երկու կողմէ Պարսիկներէն չբռնուելու համար պաշարումը վերցուց և

բաց դաշտը իջաւ: Ելումարը պաշտպանող Պարսիկ սպարապետը Զարեհրդաս յաջողեցաւ պարսիկ բանակին հետ հազորդակցութեան մտնել և յունական բանակը երկու կրակի մէջ առնել: Այդ գիշերը պատերազմական տարեգրութեանց մէջ անօրինակ դէպք մը տեղի ունեցաւ: Փիլիպպիկ, Բիւզանդական ընդհանուր սպարապետը, գիշերանց փախաւ բանակատեղիէն, ձգելով բանակը ինք իր գլխուն, և պահուըտեցաւ Աֆուման դղեակը: Աննկարագրելի էր բանակին իրարանցումը երբ յայտնուեցաւ սպարապետին փախուստը: Կորս գին փնտռելէ հետքը դատն դայն պահուըտած դղեակին մէջ: Փիլիպպիկ պատերազմի չմտնելու համար ամբողջ տարի մը անկողին պառկած անցուց, հրամատարութիւնը Հերակլիոսի յանձնելով: Այս անգործութիւնը պատճառ եղաւ իր անկուսին. տեղը սպարապետ նշանակուեցաւ Պրիսկոս:

Մօրիկ առաջուընէ հրովարտակ մը յանձնած էր Փիլիպպիկի, որով զինուորներուն ոտնիկը կը պակսեցնէր. Փիլիպպիկ ասիկա չէր հրատարակած որովհետեւ զիտէր թէ ապստամբութիւն պիտի ծագի: Բայց հիմակ որ ինք կը խաւարէր, աճապարեց գրգռող հրովարտակը Հերակլիոսի զրկել Տարսոնէն, հրամայելով զայն անմիջապէս կարգաւ բանակին և յետոյ իր գունդով մեկնիլ Հայաստան, ինչ որ հաւատարմարար կատարեց Հերակլիոս:

Երբ սպարապետին զալուստը լսելով բոլոր բանակը ընդ առաջ գնաց, սակայն Պրիսկոս, ի բնէ գոռող, ձիէն վար չիջաւ իր զինեալ հպատակներուն հետ քալելու համար՝ ինչպէս որ սովորութիւն էր (587 Ապրիլ 1): Իսկ Զատիկիտօնը կատարելէ հետքը երբ թոշակներն ալ պակսեցուց, բանակին զայրոյթը ապստամբութեան փոխուեցաւ: Որչափ կայսեր արձան ու պատկեր կար՝ փշրելէն հետքը, սուրբով ու քարերով Պրիսկոսի վրանը վազեցին, զայն կոտտանդինա, անկէ Եդեսիա և մինչեւ Բիւզանդիոն հալածեցին, իսկ իրենք իրենց սպարապետ ընտրեցին Գերմանոս:



Մարտիրոսապոլիսի քով տարուած շքեղ յաղթանակ մը, ուր Պարսից Մերուժան սպարապետը սպաննուեցաւ, վերջ դրու այս ապստամբութեան (587):

Մօրիկ սպարապետ կարգեց Փիլիպպիկը, յետոյ կոմենդիօլ (591): Այս վերջինին ձեռքով Բիւզանդացիները վճռական յաղթանակներ ունեցան Պարսիկներուն վրայ: Վահրամ, Պարսից զօրավարը, Հայաստան մտնելով ամբողջ Սիւնեաց գաւառը կը թալլէր. լսելով թէ Բիւզանդական բանակը կը մօտենայ Ռոմանոս անուն զօրավարի մը հրամանատարութեան տակ, եկաւ բանակեցաւ Երասխի տփերուն վրայ Գանձակ քաղաքին մօտերը: Երկու բանակներուն խառնուրդը սոսկալի եղաւ, Երասխ գետը կարմրեցաւ Պարսիկ արիւնով. յաղթանակը Բիւզանդացիներունն էր. Պարսիկներու այս պարտութենէն այնքան զայրացաւ Որմիզդ, որ Վահրամին զրկեց իրր նուէր՝ կնկան հազուատներ: Վահրամ ասոր պատասխան, նամակ մը զրկեց սա սկզբնաւորութեամբ. «Որմիզդայ, դատեր Խոսրովու, խնդալ»:

Զօրավարին ուղղուած նախատինքը ամբողջ բանակին կ'երթար, որ արդէն դառնացած իր պարտութենէն, ապրտամբութեան դրօշը պարզեց: Արքայից արքան ուրիշ բանակ մը զրկեց անոր դէմ, բայց ասանք ալ, Որմիզդէն դժգոհ, իրենց զօրավարը սպաննեցին և Վահրամի կողմը անցան: Ժողովուրդը ալ, իր կողմէ, գահընկեց ըրաւ Որմիզդը և անոր տեղ գահ բարձրացուց անոր տղան Խոսրով (\*): Նոր

(\*) Խոսրով Բ. Բարվիզ, Պարսից թագաւոր Մասանեան հարստութենէն: Են՝սծ է Յրդ դարու վերջերը, մեռած 828ին: 590ին յաջորդեց իր հօրը՝ Որմիզդի. ստիպուեցաւ կռուիլ Վահրամի հետ՝ իր գահուն այք ունէր: Յաղթուելով Յունաց ապաւինեցաւ. Մօրիկ կայսեր օգնութեամբ վերստացաւ իր գահը. իսկ Վարդան՝ յաղթուելով Ներսէս զօրավարէն, Թուրքերու մօտ ապաւինեցաւ. Խոսրով, ի փոխարէն, Մօրիկի տուաւ Պարա քաղաքը եւ Հայաստանի մէկ մասը. ամուսնացաւ Բիւզանդացի կայսեր աղջկան հետ: Փոկասի Մօրիկը սպաննելովը Իրանի եւ Բիւզան-



Թագաւորին առաջին գործը եղաւ հայրը գլխատել տալ, յետոյ հնազանդութեան հրաւէր ղրկեց Վահրամին: Ապստամբ զօրավարը անարգալից պատասխան մը տուաւ, Խոսրով բանակին զլուխը անցած Վահրամի դէմ եկաւ, բայց սոսկալի պարտութիւն մը կրելով հազիւ հազ կրցաւ ճողոպրիւ և ապաստանեցաւ, գրեթէ մինակը՝ Կիրակեսոն քաղաքը, որ Բիւզանդացիներուն ձեռքն էր: Հոնկէ նամակով մը դիմեց Մօրիկի օգնութիւն խնդրելու: Կայսրը ստուար բանակով մը Ներսէս Հայկազնը ղրկեց Խոսրովի, ինչպէս նաև Դոմեաթիանոս եպիսկոպոսը՝ զայն քրիստոնեայ դարձնելու համար: Պատերազմը տեղի ունեցաւ Գանձակի մէջ, Պալարաթ գետին եզերքը: Վահրամ սպաննուելով՝ իր զօրքերը ցրուեցան: Խոսրով իր հօրենական գահը նստելով, Բիւզանդացիներուն թողուց Դարա և Մծրին քաղաքները, ու Մօրիկի խրկեց ճշմարիտ Խաչափայտը՝ զոր Կաւատի որդին Խոսրով յափշտակած էր: Ասանկով սկսաւ խաղաղութեան նոր շրջան մը, որ գրեթէ բարիք մըն էր (Հայաստանի համար (592):

591ին հայ նախարարները առաջնորդութեամբ Սմբատ Բազմայազթի, փորձեցին ինքնիշխանութիւն ձեռք բերել: Այդ պահուն Սմբատ հրահանգ ստացած էր Հայկական գունդերով Թրակիա գալու՝ Սքլաւոնաց դէմ ղրկուելու համար: Սակայն նախարարներու անմիաբանութիւնը պատճառ եղաւ որ, դեռ որոշումի մը չի յանգած՝ լուրը Բիւզանդիոն հասնի և Կոմենդիոլ զօրավարը Հայաստան գայ ապստամբու-

դիոնի միջեւ պատերազմը վերսկսաւ, Խոսրով արշաւեց Բիւզանդական երկիրները (604) եւ տասնեւեօթը տարի անընդհատ յաղթահարեց դիմադրող բանակներուն: 614ին Սուրբիան աշխարհակալեց, 616ին եգիպտոսն ու Փոքր Ասիան, մինչև հասաւ Բիւզանդիոնի առջեւ: Հերակլ կայսրը ՅմբուՍենէն սնափելով յարժակողակաճի սկսաւ եւ իր կորզին աշխարհակալեց իրանի թագաւորութիւնը: Իմբրով Բ. ձերբացած էր, յի կրցաւ դէմ դնել: Թագաւորութեան մեծերը գահընկէց ըրին գինքը՝ իր զակին ձեռքով սպաննուեցաւ:

թիւնը նուաճելու։ Սմբատ չղթայակապ Պոլիս բերուեցաւ և Մերակոյտին կողմէ դատուելով՝ դատապարտուեցաւ ամփիթատրոնին մէջ գազաններուն առջև ձգուելու։ Սմբատ իր գերմարդկային ուժին շնորհիւ հետզհետէ յաղթեց իրեն դէմ արձակուած վայրի գազաններուն, այնպէս որ հանդիսականները բուռն ծափերով կայսրէն շնորհ խնդրեցին։ Մօրիկ ներում շնորհեց և արքունիքին մէջ ընդունեց զայն։

Սակայն արեւմուտքի մէջ Բիւզանդական պետութեան բազդը նուազող արեւ մը եղաւ։ Երկու հզօր ազգեր գերակշռութիւն կ'ուզէին ձեռք բերել։ Գաղղիացիները՝ Եւրոպայի համար, Լոմպարտացիք<sup>(\*)</sup>՝ Իտալիոյ։ Այս վերջիններուն Աւգարիս Թագաւորը Իտալիոյ մեծագոյն մասը, մինչև Սփօլէտօ աշխարհակալեց և գաւառները իր իշխաններուն բաժնելով՝ եղաւ առաջին հիմնադիր աւատական կազմակերպութեան (584)։

Բիւտերերդ, Գաղղիացիներու Թագաւորը չորս անգամ Ալպիաններէն անցաւ Լոմպարտացիներու դէմ կռուելու հա-

(\*) Լոմպարտացիք կ'ոմ Լանկօպարտները կը բնակին Իտալիոյ հիւսիսային մասին մէջ։ Ասոնց պատմութիւնը կ'սկսի Քրիստոսի Աղարուն. իրենց ունեւորող Յագաւորին Վագոնի ժամանակ գաղղիացիներուն բարեկամացան։ 526ին Յուստինիանոս իրենց կը Պոզուր Բաննօնի գաւառը եւ իրենց Յագաւորը Օտուան՝ ներսէս զօրավարին օգնական զինուոր կը դռկէր Գոթացիներուն դէմ կռուելու համար։ Օտուանի որդին Ալպուան, որու երկու կիներէն մէկն էր Քլօթէր Ա.ի աղջիկը Քլօտօսվինտ՝ Իտալիա իջաւ, զրաւեց Միլանը (589) եւ Բավիան (572), Քօսթանայի, Օմպրոյի եւ Պէնէվսնի զքսութեան մէկ մասին տիրելէ հետքը, — Ասթօլք 752ին զրաւեց Ռավէննան ու Բէնէթաքօլը, եւ երկու անգամ փորձեց տիրանալ Հռոմի, բայց Բեթեն արգիլեց զինքը, Հռոմի հետ չսփուելու այդ փափաքը պատճառ եղաւ Լոմպարտական Յագաւորութեան կործանումին։ Իսթրիոյ դուքսը Տիտիէ 758ին զահ ելաւ։ 772ին յանդըգնեցաւ ընդդիմակայել Ատրիէն պապին որ Մեծն Կարոլոսը օգնութեան կանչեց։ Եարլըման Իտալիա անցաւ, պաշարեց ու առաւ Բավիան (774) եւ Ատրիէնը ընտանիքով գերի բռնեց, Այսպէս կը վերջանայ Լոմպարտական Յագաւորութիւնը որ երկու դարէն քիչ մը անելի տեսած էր։

մար: Այս յարձակումները կատարելու համար Մօրիկ դրամ կը վճարէր Գաղղիացիներուն, բայց երբ Լոմպարտացիները աւելի մեծ գումար մը կը նուիրէին, Գաղղիացիք ետ կը դառնային առանց կռուելու, Մօրիկի դրամն ալ հտ չվերադարձնելով:

584ին այս երկու ազգերը միացան կռուելու համար շքառայեցիներու դէմ զոր աշխարհիս հին բռնաւորները կ'անուանէին: Լոմպարտացիները պաշարեցին Հոտմը, շրջակաները աւերեցին և Բատուան օր փայտաշէն էր կրակի տուին:

Սքլաւոններն ալ 586ին յարձակեցան Բիւզանդացիներուն վրայ և հասան մինչեւ Պոլսոյ պարիսպներուն տակ, կոմնդիւղ զօրավարը յանկարծական յարձակումով զիրենք մինչեւ Ադրիանուպոլիս վանեց: Այս պատերազմին կը մասնակցէին նաև հայկական զունդեր, որոնց հրամանատարը Մուշեղ Մամիկոնեան գերի բռնուելով սպաննուեցաւ (587):

Պրիսկոս զօրվարն ալ մեծագոյն յաջողութիւններ ունեցաւ Սքլավոններու դէմ: Ասոնց Մուսօք Թագաւորին եղբայրը մեռած ըլլալով սուգ մտած և ըստ բարբարոսներու սովորութեան, Մուսօք դէշ տեսակէն զինովցած էր: Պրիսկոս գիշերանց վրանը խուժելով զայն գերի բռնեց:

Կայսրը հրամայած էր Պրիսկոսի՝ Դանուբէն անդին անցնել: Կծծի Մօրիկի միտքն էր իր զինուորները թշնամիին աւարներովը կերակրել: Սակայն Սքլաւոններու յարձակումները և մասամբ ալ բիւզանդացի զինուորներուն ընդդիմութիւնը արգելք եղան, որով Պրիսկոս չկրցաւ կատարել կայսեր հրամանը: Երբ ձմեռը Պոլիս դարձաւ, Մօրիկ զայն կըշտամբեց և իր Պետրոս եղբայրը սպարապետ կարգեց: Պետրոս, սակայն, անկարող մէկը ըլլալուն, կրկին Պրիսկոս պաշտօնի կոչուեցաւ:

Բայց Սքլավոններու ետին կը կենար քաջարի ազգ մը, Աւարները, որոնց Բիւզանդացիք տուրք կը վճարէին հանդիստ մեալու համար՝ երբ պատերազմի բռնուած կ'ըլլային

Պարսիկներուն հետ. Աւարները<sup>(\*)</sup> գերակշիռ դիրք մը ունենցած են Պալքանեան թերակղզիին մէջ և տեղացիներուն վրայ ցեղաբանական յեղաշրջութիւն մը յառաջ բերած են: Ելլազայի զանազան կողմերը հաստատուն բնակութիւններ ունենալով ջերմապէս նպաստած են Յոյներուն սլաւացման: Այս

(\*) Աւարներ. — Թուրքերու ընտանիքէն, Հոներու ցեղակից ազգ մը: Ասոնց պատմութիւնը շատ մուճ է: Սկիզբները կը բնակէին Կասպեան դաշտերուն մէջ. խիստ հարուստ վաճառականութիւն մը ունէին, մանաւանդ Բակտրիոյ ու Բաքեյոնի արտադրութեանց վրայ: Միեւնոյն ժամանակ պատերազմիկ ցեղ մըն ալ էին. ի հեծուկս Սիրաքսներու (զուցէ արդի Խազարներու) երկու հարիւր հազար ծիւռոր զինեցին եւ Միհրդատի որդին Փառնակի որկեցին: Ետքէն Հռոմայեցիք ասոնք զործածեցին Վասիդի Թագաւորներու զաշնակից Խազարներու ջարշաւանքին դէմ գլխու համար:

Ղեցերորդ դարու կիսուն Աւարները երեւցան Իրապայի մէջ եւ դէպ ի արեւմուտք արշաւելով Ազսիւս ծովուն բոլորտիքը բնակեցան: Յետոյ իրենց Պայսն անուն ցեղապետին առաջնորդութեամբ Դանուբի եզերքները արշաւեցին. իրենցմէ մաս լմը միացաւ Լոմպարտացիներուն եւ շնչեց Բաննօնիի մէջ Գեքիտէներու կայսրութիւնը: Լոմպարտացիներուն մեկնելէն յետոյ Աւարները տիրացան Բաննօնիի ամբողջութեան, հպատակեցուցին Տալմացիան եւ հասան մինչեւ Իտալիա ուր յաղթահարեցին Գազգիայիներն ու Լոմպարտացիները: Եւրոպացիներն նաեւ Դանուբի հիւսիս սյին կողմի բնակչութիւնը եւ ստիպեցին Սել ծովու եզերքը բնակող Պուլկարները ճանչնալ իրենց գերիշխանութիւնը: Կոստանդնուպոլսոյ պարիսպներուն առջեւ 610ին առաջին պարտութիւնը Լկիզը դրաւ իրենց ժախողութեան. Հպատակ ազգերը ոտք ելլելով Տալմացիայէն դուրս վանեցին Աւարները որոնք դէպի արեւմուտք դիմեցին բայց բաղխեցան Գարօլէնթիէն կ'սլարութեան: Մեծն Գարօլս անձամբ Աւարներուն դէմ ելաւ (790) եւ մասամբ ջնջեց մասամբ հպատակեցուց: Աւարներէն մաս մը ցրուեցաւ Գարանիոյ մէջ, մաս մըն ալ Հունգարիոյ մէջ. ուրիշ մաս մըն ալ գաղթեց դէպի Գովկաս: 827ին ամբողջապէս ջնջուած էր Աւարներու անունը պատմութեան մէջէն:

Ղեցերորդ դարուն մէջ, Աւարներու մեծ արշաւանքին ատեն անոնցմէ մաս մնացած էր Գովկասի մէջ, ցարդ կը մնան անոնք Քոյսու գետին եզերքը. մահմետական են ասոնք եւ հազար տունի մօտ բնակչութիւն մը կը ձեւացնեն. Ասոնց զլխաւորը Աւար-Խամ հարկատու է Ռուսաց:

ուլաւացումի ազգեցութեան ննթարիւում է ամբողջ Պալքան-  
եան թերակղզին 583ի առննները :

Պարսկական պատերազմի ամէնէն տաք միջոցին Աւար-  
ները Բիւզանդիոնէ տուրքի յաւելում պահանջեցին : Մօրիկ  
ստիպեալ ընդունեց, բայց երբ Արեւելքի գործերը կարգա-  
գրուեցան՝ Մօրիկ՝ Թրակիոյ և Իլլիրիայի՝ բանակները Աւար-  
ներուն դէմ գրկեց : Բարբարոսները ոտքիջեան, տիրեցին  
Սինգիտոն, Գասթոս, Անսիմութ քաղաքներուն և հասան  
մինչև Ադրիանուպոլիս : Յովհաննէս Միյաթաքէոն Պարսկաս-  
տանէն կոնչուեցաւ, և Ադրիանուպոլիսի քով այնպիսի  
չախչախիչ յաղթանակ մը տարաւ Աւարներու վրայ որ բար-  
բարոսները Սինգիտոնը Բիւզանդացիներուն ձգելով քաշուե-  
ցան իրենց երկիրը (587) :

588ին՝ Դանուբի եզերքներուն վրայ պատերազմը վեր-  
սկսաւ . Բիւզանդացիներուն՝ կը հրամայէր Պրիսկոս որ քանի  
մը յաղթանակներ տարաւ, սակայն ձմեռուն ցուրտը և  
բանակին մէջ տիրող սովը անտանելի կը դարձնէին ո՛ր և է  
լուրջ ճակատամարտ : Խաքանը, կ'ըսէ պատմութիւնը, գթաց  
Յոյներուն վրայ, մանաւանդ որ Չատիկի օրերն ալ վրայ  
հասած էին, և կառքերով լեցուն ուտելիք զրկեց անոնց :  
Հինգ՝ օրի չափ երկու բանակները իրար խառնուած ընտանե-  
բար կ'ապրէին, երբ իմացուեցաւ կոմննդիոլի նոր գունդե-  
րով յառաջանալը : Աւարներու Խաքանը յանկարծ սլո՛ւերը  
ամփոփեց և կոմննդիոլի վրայ յարձակելով շարդեց ցրուեց  
անոր զօրքերը : յետոյ արշաւեց դէպ ի հարաւ աւերելով  
Թրակիան և Պոլիսը սարսափի մատնելով :

Խաքանը տասներկու հազար գերի բռնած էր . ասոնք  
Փիլիպպիկի զօրքերն էին, նշանաւոր իրենց ապստամբու-  
թիւններով : Բարբարոսը դրամի պէտք ունենալուն լուր զըր-  
կեց Մօրիկի թէ գերիները կը վերադարձնէ եթէ մարդ գլուխ  
ոսկի մը վճարուի իրեն : Մօրիկ չգիտցուի որ ազահութենէ  
գրգռուած, թէ ո՛չ ապստամբ ղինուորներուն դէմ նեղացած

ըլաւուն՝ մերժեց։ Խաքան առաջարկած դրամին կէօր ուզեց, դարձեալ մերժուեցաւ. երրորդ մասը ուզեց, կրկին մերժուեցաւ։ Ասիկա վերջին գինն էր (գրեթէ 1200 օսմ. ոսկի 12,000 հոգիի համար)։ Խաքանը այս կրկնակի մերժու մեքէն զայրացած մէկ օրուան մէջ շարդեց բոլոր գերիները (6006լս.)։

Պոլոյ մէջ մեծ եղաւ յուզումը։ Զարգուողներուն ազգականները ահագին իրարանցում մը յարուցին, որ քիչ եաքը յեղափոխութեան պիտի փոխուէր։

Մօրիկ Աւարներուն դէմ զրկեց Պրիսկոսը, որ երկու օրուան մէջ գերիներու վրէժը առաւ՝ նոյնչափ Աւար դիակնացնելով Դանուփի ամանց վրայ։ Յաջորդաբար, երկու ամսուան մէջ, հինգ յաղթանակ տարաւ ետեւ ետեւէ։ Չմեռը կը մօտենար։ Մօրիկ, որսւ ազահութիւնը անբուժելի էր, մտածեց թոչակ տալու տեղ՝ թշնամիներու կողոպուտով սնուցանել զօրքերը. հրամայեց բանակին Դանուրի անդիի կողմը անցնիլ, և իր կամքը ապահով կատարել տալու համար Պրիսկոսը ետ կանչելով իր Պետրոս եղբայրը խրկեց։

Ձինուորները կայսեր դիտումը աղէկ դիտէին. այս անգամ կարելի չէր հանգուրժել, իրենց եղբայրները թշնամիին սուրին յանձնելէ հաքը զիրենք ալ սառերու մէջ մեռցնել կ'ուզէր ան. իսկոյն ապստամբութեան դրօշը պարզեցին և Պետրոսը բանակէն վռնտելով Փոկասը ընդհանուր սպարապետ անուանեցին։ Փոկաս բանակին գլուխը անցած քալեց Պոլոյ վրայ։

Արդէն մայրաքաղաքին ժողովուրդն ալ սկսած էր ապստամբութեան նշաններ ցոյց տալ։ 602ի Մնուռդի օրն էր, երբ կայսրը բոկոտն թափօր կը կատարէր քաղաքին փողոցներուն մէջ, խուժանը քարկոծեց զինքը, « Հաց տո՛ւր մեզի » աղաղակելով։ Հագիւ թէ Մօրիկ կրցաւ Պլաքեռնեան եկեղեցին ապաստանիլ։ Այս պահուն Փոկաս մայրաքաղաքին վրայ կը քալէր։ Թէօդոս թագաժառանգը և Գերմանոս՝ Մօրիկի աները՝ որսի ելած էին։ Փոկաս ասոնց հանդիպելով

նախ Թէոդոսի, յետոյ Գերմանոսի առաջարկեց Մօրիկի գահուն զրայ բարձրանալ, բայց ասոնք վախերնուն մերժեցին ու Պոլլոս փախան:

Կայսրը գլխադրութեան պատրաստուեցաւ: Կոմենդիոլ հրաման ստացաւ քաղաքը պաշտպանել. բայց նոյն իսկ քաղաքացիները ապստամբած էին Մօրիկի դէմ. գիշերը խուժանը կրակի տուաւ բոլոր այն իշխաններուն ապարանքները որոնք հաւատարիմ մնացեր էին կայսեր:

Մօրիկ գիշերանց ընտանիքին հետ միասին նաւակ մը նետուեցաւ փախչիլ ազատելու համար այս ապերախտ քաղաքէն (602 Նոյեմբեր 23): Մովը ալեկոծուած էր և ամէն վայրկեան հալածողներէ բռնուելու վախին կը միանար ծովամոյն ըլլալու սարսափը: Աւտուան դէմ հասան Սուրբ Աւտանոմ եկեղեցին (Իզմիտի մօտ), ուր յանկարծական կաթուած մը զինքը անկարող ըրաւ յառաջանալու:

Նոյն գիշերը Փոկաս՝ կայսր անուանուելով գունդ մը զինուոր դրկած էր Մօրիկը ձերբակալելու: Դահիճները առտուան դէմ Ս. Աւտանոմ հասան եւ դժբաղդ կայսրը բռնելով ընտանիքովը բերին Եւարոպիոյ նաւահանգիստը (Ֆէնէր Պագէտի): Հոն գազանային վայրագութեամբ Մօրիկի զաւակները մէկիկ մէկիկ զլխատեցին իրենց հօրը աչքին առջեւ, և ի վերջոյ դժբաղդ կայսեր գլուխն ալ կտրեցին (602 Նոյեմբեր 27). նոյնպէս սպաննըուեցան կայսեր եղբայրը և կոմենդիոլ: Մինակ ազատեցան Մօրիկի կոստանդինա կիները և երեք աղջիկները, որոնք վանքի մը մէջ փակուեցան. ասոնց համար ալ կ'ըսուի թէ երեք տարի ետքը դարձեալ Քաղկեդոնի Եւարոպիոյ նաւահանգիստին մէջ զլխատուեցան: Մօրիկ 20 տարի, 6 ամիս եւ



Փոկաս

23 օր թագաւորեց. մարմինը թաղուեցաւ Մամանտ եկեղեցիին մէջ: Զուականերուն գլխատուելու պահուն Մօրիկ աչքերը երկինք յառած կը մըմնջէր, « Արդար ես դու աէր, և ուղիղ է դատաստան քո », կը պատմեն թէ կրտսեր զուակը դեռ տղայ ըլլալով դայեակը կը պահէ զայն և անոր տեղ իր իսկ զուակը կը ներկայացնէ դահիճին. սակայն Մօրիկ չը հանգուրժելով մօր մը այս դիւցազնութեան, բացարձակ կը յայտնէ թէ իր տղան չէ ատիկա և կը հրամայէ իր հարազատ զուակը յանձնել դահիճին:

Պարսից Խոսրով թագաւորը շատ ցաւելով իր բարերարին մահուան վրայ, պատրաստութիւններ տեսաւ անոր վրէժը առնելու: Միւս կողմէ Ներսէս Յունաց մեծ զօրավարը (Ներսէս Բասննցիի որդին) ազատամբելով Փոկասէն, լուր զրկեց Խոսրովին յարձակիլ Փոկասին վրայ: Տակաւին Խոսրով չհասած, Ներսէս պատերազմի բռնուած էր: Փոկաս տեսնելով որ անհնար է նուաճել Ներսէսը, դաւաճանութեամբ իր մօտ կանչեց զայն, բռնեց և ողջ ողջ այրել տուաւ:

Միւս կողմէ Խոսրով Աշոտ Բագրատունիի հետ յարձակեցաւ Փակոսի վրայ, հասաւ մինչեւ Գատըզիւղ, ուր ամէն բան կոզոպտելով ու ակերելով դարձաւ իր երկիրը:



## Մ Չ Ե Չ Վ Ն Ո Ւ Ն Ի

[668]

Հերակլ կայսեր թողը Կոստանդ (\*) իր չարագործութիւններուն պատճառաւ ատելի կը դառնայ ժողովուրդին և

(\*) Կոստանդ Բ., Արեւելեան կայսր (641—668).— Ասոր օրով Արաբացիները գրաւեցին Եգիպտոսը, Սիւրիան, Գիպրոսը, Ռօտոսը, Կիլիկիան եւ ամբողջ Աֆրիկէի մասը մինչեւ Մաւրիտանիա: Միւս կողմէ Լոմպարտացիներն ալ կը տարածուէին ամբողջ Իտալիոյ մէջ: Իր կայսրութեան այս քայքայումին միջոցին Կոստանդ Բ. կ'զրազէր ժոնօթէ-



խոյս կուտայ Միկիլիոյ Սիրակուսա քաղաքը՝ քանի մը իշխաններու հետ, որոնց մէջ կար նաեւ Մծեծ Գնունի, զոր Յոյները կ'անուանէին Մեծիժ կամ Մեծիժինոս Հայ: Ասիկա առաջ՝ Հերակլ կայսեր կողմէ՝ Փոքր Հայոց վրայ իշխան եւ զօրավար կարգուած էր: Կոստանդ եօթը տարի Միկիլիա մնալէ ետքը մտածեց հոն փոխադրել կայսերական գահը. նամակ գրեց Կ. Պոլիս որ թագուհին և զաւակները իրեն գան,



Հերակլ



Կոստանդ

սակայն տէրութեան աւագանին թոյլ չտուաւ: Օր մը բազնիքին մէջ լուացուած պահուն Անդրէաս անուն սպասաւոր մը ջուրի անօթը կայսեր գլխուն զարկաւ և սպաննեց զայն: Կոստանդի մահը լսելուն պէս պալատականներն ու զօրքերը կայսր ընտրեցին Մծեծ Գնունին:

Իսթները յաղթական հանել օրթօտօքուծեան դէժ. մտադրեց չոս հաստատուիլ, բայց քանի մը օր ետքը Լոմպարտացիներէն վախնալով հեռացաւ Լաոմէն եկեղեցիները թալլելէ վերջ. զնաց հաստատուեցաւ Սիրակուսա, ուր ինքզինքը տուած զեղիսուծեան, կայսրութեան գանձը դատարկացնել կ'աշխատէր. բազնիքի մէջ սպասաւոր մը եպաննեց զինքը:

Կաստանդի որդին Կաստանդին Պոզոնատ (\*) հօրը մահ-  
ուան լուրը առնելով ինքզինքը  
կայսր կը հռչակէ եւ ահագին  
բանակ մը կազմելով Սիկիլիա  
կ'արշաւէ. հան կը յաղթէ Մժե-  
ժին, զայն գերի բռնելով Պոլլիս  
կը բերէ ու կը սպաննէ:



Կաստանդին Պոզոնատ

(\*) Կաստանդին Գ. Պոզոնատ (648—685). Բիզանդական Կայսր,  
երբ հօրը Կաստանդ Բ.ի Սիրակուսայի մէջ սպաննուելովը զահր իրեն կը  
մնար, ստիպուած էր միեւնոյն ժամանակ զսպել Մժեժ Գնունին՝ որ  
Սիկիլիոյ մէջ կայսր հռչակուած էր. Ասիոյ մէջ զինուորական ուստամ-  
բուծիւն մը. եւ վանել Արաբները որոնք Բիզանդական Ափրիկէն զրա-  
ւելէ ետքը, Կրետէն ու առին եւ եօժը տալի անընդհատ (672—678)  
պաշարեցին Կ. Պոլիսը: Կայսեր կորովամտութիւնը, Բիզանդական վե-  
րակազմեալ բանակներուն կարգապահութիւնը, յունական հուրի զիւտը՝  
ստիպեցին արաբները որ պաշարուժը վերցնեն ու հաշտութիւն կնքեն:  
Արեւմուտքի մէջ Աւարներու եւ Սլաւներու արշաւանքները խիստ  
վնասաբեր եղան: Պոլլարները Մէզիան զրաւելով Պոլլարական առա-  
ջին Քաղաւորութեան նախաքարը հիմնեցին. Բայց Խրուաններն ու  
Սերպերը քրիստոնէութիւնը ընդունելով, սլաւները՝ շեղեցեցան կը  
պատրաստէին, նոյնպէս Կ. Պոլլոյ մէջ վեցերորդ տիեզերական ժողովը  
(681) Հռոմի հետ կրօնական միութիւնը հաստատելով արեւելիան կայս-  
րութեան զօրութիւնն ու ազդեցութիւնը կ'աւելցնէին, որով Կաստանդին  
Գ.ի իշխանութիւնը Բիզանդիոնի համար խիստ փառաւոր եղաւ:

## Փ Ի Լ Ի Պ Պ Ի Կ Ո Ս Վ Ա Ր Գ Ա Ն

[ 311—313 ]

Ասոր մասին պատմութիւնը բաւական շփոթ տեղեկութիւններ կուտայ: Պատմաբաններէ ոմանք Վարդան թուրք անունը կուտան ասոր, մինչդեռ ուրիշ մատենագիրներ Վարդան թուրքի իշխանութիւնը կը գնեն 803ին, այսինքն 100 տարի ետքը: միւս կողմէ կարգ մը պատմաբաններ՝ 711ին իշխող Փիլիպպիկոսի անունը կուտան Վարդան: Այս անուանումներէն յառաջ եկած է շփոթութիւն մը իշխանութեան թուականներու ալ: Հոս պիտի խօսինք Փիլիպպիկոսի վրայ, իր կարգին (803ի թուականին) ձգելով Վարդան թուրքի պատմութիւնը:



Փիլիպպիկոս Վարդան

Փիլիպպիկոս Հայ էր՝ Մամիկոնեան ցեղէն. ասոր կը վկայեն Կ. Պոլսոյ Պատրիարք Ս. Նիկեփորի գրուածքները:

Դէմքով փառահեղ, խօսքերովը՝ մոգիչ, շքեղութիւնովը՝ ռամիկը կը շլացնէր: Ճարտասան՝ մասնագէտ աստուածաբան, ամէն ձիրք ունէր պատրիարք ըլլալու: Միւս կողմէ այնքան ալ հաճոյքի սիրահար էր որ չէր վարաներ տէրութեան գանձը յափշտակել, Աստուծմէ՝ ուխտեալ կոյսերը խլել:

Մնաւ Չմիւռնիոյ մօտ Պերգամոն քաղաքը: Հայրն էր Նիկեփոր Պատրիկը: Որոշ բան մը չենք գիտեր իր ծննդեան թուականին և ոչ ալ անոր ընտանեկան պարագաներուն վրայ: զաւակ չէ ունեցած, կ'երեւի թէ ամուսնացած ալ չէ եղեր:

Իր ազնուականութեանը գլխակից՝ պատանի եղած ասե՛ն։ Ին իսկ կը տոջորէր յանդուգն փառասիրութիւններով։ Օր մը երազին մէջ տեսաւ որ արծիւ մը՝ ամպերէն զատուելով իր վրայ կ'իջնէր և թեւերովը զինքը կը հովանաւորէր։ Անուշ ապաւորութեան մը տակ արթննալով «կայսր պիտի ըլլամ» գուշակեց։ [Արծիւը այն ատենուան երազահանութեան մէջ կայսերական գահ կը նշանակէր]։ Սակայն սիրտը հանդարտ չէր. գնաց տեսնել սրբակեաց ճգնաւորներէն մէկը, որոնք Ողիմպոսի մէջ միայնացած էին։ Մերունի ճգնաւորը ուշագրութեամբ մտիկ ըրաւ իրեն, ու ըսաւ. «Դուն կայսր պիտի ըլլա՛ս, Աստուած քեզ գահը կը հանէ, բայց պայմանով մը»։

Յետոյ ձեռքը մայրաքաղաքին վրայ տարածելով աւելցուց. — «Պղծուած է, նշովուած է այս քաղաքը։ Մոլորութիւնը կը աիրէ հո՛ն։ Քրիստոսի կը հայոյեն՝ երկու կամք ընծայելով անոր։ Վեցերորդ կոչուած դիւային ժողովը դեռ յարգ ունի հոն։ Աստուած քեզ գործիք կ'ընէ՝ ճշմարտութիւնը վերականգնելու համար։ Երդուընցի՛ր, որ երբ գահ ելլես, հրովարտակով մը հրամայես ժողովուրդին մի՛ կամք դաւանիլ ի Քրիստոս»։

Փիլիպպիկ երդում ըրաւ, և ճգնաւորին քովէն հեռանալով մայրաքաղաք մտաւ այնպիսի յոխորտանքով մը, որուն մէջ կը կարգացուէր «Օր մը ինծի պիտի հնազանդիս» խօսքը։ Դժբաղդաբար փառասիրութեան չափով դազանապահութիւն չունեցաւ. բարեկամներէն մէկուն յայտնեց զինքը տոջորող գազանիքը, ան ալ շիտակ գնաց կայսեր ականջը հասցուց։ Օր մը երբ Փիլիպպիկ սովորական երազներուն մէջ թաղուած ինքզինքը կայսր եղած կը տեսնէր խումբ մը զինուորներ ձերբակալեցին զինքը և երկաթի զարնելով պալատ բերին։ Նիւրոզ կայսրն էր Քիպէր (702)՝ ասիկա հայ պատրիկը ծաղրելով գանակոծել տուաւ ու անիւնի տալով Յունաստանի Քէֆալոնիա կղզին աքսորեց։

705ի առննները կրկին գահը կը բարձրանար Յուստինիանոս Բ. (\*): Ասիկա ընջատ չերեւնալու համար սակիէքիք



Թիպէր Բ.



Յուստինիանոս Բ.

կը դորձածէր: Քերտոնի մէջ՝ ուր անբարուած էր՝ ծաղրանքի առարկայ դարձած էր ասիկա, և Յուստինիանոս երդում

**Յուստինիանոս Բ. Ռիմորմարո** [Ըււււ], Արեւելոյ կայսր (685—695): Որդի եւ յաջորդ Կոստանդի: Տասնեւվեց տարեկանին զահ բարձրացաւ: Արաքներու հետ կնքուած՝ ըստ երելոյնին շահաւոր՝ հաշտութիւն մը (685) ինչպէս նաեւ Մակեդոնիոյ Սլաւներու հպատակութիւնը (687), յաջող սկզբնաւորութիւն մը կ'ընծայէին իր իշխանութեան: Բայց Լիբանանի Մարտանիները Թրակիա փոխադրելով տկարացուց Ասիոյ մէջ հայսրութեան ոյժերը: Սլաւները Օքսիդրիոնի մէջ հաստատելն ալ ուրիշ սխալ մը եղաւ: Յուստինիանոս Արաքներէն ու Պուլկարներէն յաղթութեամբ, իր քմահաճ ու բռնապետական ընթացքն ալ դժգոհութեան տեղի տալով, զինուորական ապստամբութիւն մը տապալեց զայն: Քի՞՞ր կըտընցին եւ Քերտոն արտորեցին, Պուլկարներու Թէրվէլ Խանին օգնութեամբ 705ին վերստացաւ իր կայսրութիւնը: Առանց հոգ ընելու Արաքներու մինչեւ Թիւեան յառաջխաղացումը, մինակ զբաղեցաւ Ռավէնէն ու Քերտոնէ վրէժ լուծելու: Փիլիպպիկոս Վարդան Քերտոնի մէջ զինուորական ապստամբութեան մը զլուխը անցնելով տապալեց Յուստինիանոսը, Իրմով կը վերջանայ շեռտիկոսի ցեղին իշխանութիւնը:

ըրած էր Քերտանի (\*) բնակիչները բնաջինջ ընել եթէ կըրկին դահ ելլէր: Ժամանակը եկած էր երգումը կատարելու: 100,000 հոգի պարունակող նաւատորմիդ մը կազմեց և զըրկեց Քերտանի վրայ. այս թիւը կը կազմէին՝ դահիճներէն զատ՝ տէրութեան բոլոր աքսորականները, որոնք շարդուած բնակչութեան տեղը պիտի բռնէին: Փիլիպպիկոս ալ ասոնց մէջ էր: Արշաւախումբին կը հրամայէր Ստեփանոս Ասմէքտոս, որ ամբողջ Քերտանը արիւնով ողողելէ ետքը, ողջ մընացողներն ալ գերի վարեց ու Կ. Պոլսոյ ճամբան բռնեց, կայսեր Եղիա զինակիցը ձգելով հոն: Սակայն նաւատորմիզը փոթորիկի բռնուելով խորտակուեցաւ, 63,000 հոգի կորան՝ Ստեփանոս ալ միասին:

Այս աղէտին վրայ կայսրը իր զինակիբրին հրաման զըրկեց՝ կաթնկեր տղու մը իսկ չխնայել: Եւ որպէսզի Խազարաց թագաւորը Քերտանցիներուն չօգնէ, երեք հարիւր զինուորով կտ դարձուց երկու Խազարները զորս գերի բռնած էին. անոնցմէ մին տեղը հասնելով մեռաւ, Խազարները անոր գերեզմանին զոհեցին երեք հարիւր Հռոմայեցիները և որջեցին ամէն օգնութիւն ընել տառապեալներուն: Քերտանցիները յուսահատ կռիւի մը պատրաստուեցան. արդէն կայսեր զօրքն ալ ապստամբելով քաղաքացիներուն միացած էր, իբր կայսր հռչակելով Փիլիպպիկոս:

Յուստինիանոս հրամայեց իր Մաւրոս զօրավարին որ

\*Քերտոն. — Հիմակուան Սեվաստաբօլէն 2 քիլոմէտրի չափ դէպի արեւմուտք կը գտնուէր. Հիմնուած է Քրիստոսէ 600 տարի առաջ, Հերազի գաղթականներու ձեռքով: Իր վաճառականութիւնը մեծ կարեւորութիւն ստացած էր, բայց բարբարոսաց արշաւանքները կը վնասէին անոր: Բիւզանդացի կայսրերու ժամանակ իբր արտոգրվայր կը ծառայէր: 988ին Վլատիմիր, Ռուսաց մեծ դուքսը զրաւեց Քերտոնը բայց չի կրցաւ երկար ատեն պահել: Թաթարները հիմնայատակ կործանեցին զայն 1363ին: Երբ Ռուսերը Սեվաստաբօլը ամրացուցին, Քերտոնի ակերակներէն ինչ որ կը մնար, ամբողջովին բնաջինջ եղաւ:

անմիջապէս Քերտոն երթայ, աւերէ, քանդէ, քաղաքէն հետք մը չթողու և զայն ամբողջովին արտի վերածէ:

Հազիւ թէ Մաւրոս պաշարած էր Քերտոնը երբ Խազարներու ստուար բանակ մը քաղաքացիներուն օգնութեան հասաւ: Մաւրոս տեսաւ որ եթէ դէմ դնէ՝ Խազարներու ձեռքով պիտի սպաննուի, եթէ նահանջէ՝ կայսեր սրով, ուստի լաւագոյն սեպեց Վարդանի կողմը անցնիլ:

Ասդին Յուստինիանոս անհամբեր լուրի կ'սպասէր, որ եր, շարաթներ անցան և տակաւին լուր մը չէր գար՝ դժբաղդութիւն մը գուշակելով նոր բանակի մը դուրսը անցած ցամաքի կողմէն հասաւ մինչև Սինոպ. հետեւէն առագաստանաւերու բազմութիւն մը տեսաւ. Յունական նաւատորմն էր. մարդ զրկեց հարցնելու թէ առանց կայ-



Փիլիպպիկոս Վարդանի դրամը

սեր հրամանին ո՛ւր կ'երթան: «Վարդան կայսրը մայրաքաղաք կը տանինք» պատասխանեցին (711 Հոկտմ. 24): Քիչ մնաց Յուստինիանոս բարկութենէն կաթուածահար ըլլար: Բանակին հետ միասին դարձաւ Կ. Պոլիս, բայց Փիլիպպիկոս իրմէ առաջ հասած ըլլալով արդէն իսկ հաստատուած էր գահին վրայ, ուստի Յուստինիանոս քաշուեցաւ դէպի Դամաստրիս (Նիկոմիդիոյ մօտերը): Փիլիպպիկոս հետեւէն հասաւ և Յուստինիանոսի զօրքերը իր կողմը շահելով, սպաննել տուաւ զայն:

Յուստինիանոսի վեց տարեկան թիպէր անուն տղան ալ սպաննել տալով՝ Փիլիպպիկոս բացարձակ տէրը կը մնար Հռոմէական պետութեան (711 Նոյեմբեր)։

Փիլիպպիկոս կայսր ըլլալէ առաջ իրեն գահը մարգարէացոյ ճգնաւարին երդում մը տուած էր։ Կայսր հռչակուելուն պէս բոլոր արեւելքի եպիսկոպոսները հաւաքեց, զանոնք բռնադատեց որ Ձ. տիեզերական ժողովը բոլորովին հերքեն և միակամեայց դաւանութիւնը ընդունին։ Ասոր հաւանութիւն չտուող բոլոր եպիսկոպոսները փոխուեցան։ Կիւրոսի տեղ պատրիարքական գահը զրաւեց Յովհան անուն սարկաւազ մը։

Մինչդեռ Վարդան կրօնական փցուն խնդիրներով կ'զբաղէր, Պուլկարներու թէրլիս թագաւորը, իր բարեկամ Յուստինիանոսի վրէժը լուծելու համար յարձակեցաւ Բիւզանդացիներու վրայ և հասաւ մինչեւ Սիյքեան աւանը (հիմակուան կալաթա) ճամբուն վրայ ամէն բան թալլելով ու աւերելով։ Միւս կողմէ ալ Աբարացիները կ'աւերէին Արեւելքը հասնելով մինչեւ Պոնտոս ու գրաւելով Ամասիան և Անտիօքը (հիմակուան Ազշէհիր)։

Փիլիպպիկ, իր յաջորդութեան վրայ հոգ մը չունենալով կառավարութեան գործերը կը ձգէր որ ուղածնուն պէս երթան։ Մինակ գովելի է սա կէտին մէջ որ իր ազգակիցները՝ Հայերը՝ միշտ սիրով պաշտպանեց, 719ի արարական արշաւանքին հետեւանքով հալածական հայերը տեղաւորեց Մէլիտինէ և Չորրորդ Հայքի մէջ (հիմակուան Մալաթիա ու Խարբերդ)։ Նոյն իսկ կ'ըսեն թէ Յոյներուն հրամայեց հայկական ձէոր գործածել։ Երկու տարուան մէջ սպառեց տէրութեան գանձը։ Տուները ու վանքերը կը պտըտէր, հաւնած կիներն ու աղջիկները պալատ բերել կուտար։

Ասանկ կայսր մը՝ սակայն չէր կրնար երկար ատեն թագաւորել։ Դաւաճանութիւն մը կազմուեցաւ շուտով, որու գլխաւորներն էին Գէորգ Բարափոս և Թէոտոս Պատ-



րիկ, իսկ գործադրութիւնը յանձնուեցաւ Ռուփոս անուն յանգուզն զօրավարին: Թագաւորին սենեակին գուռները բանալու համար իրենց հետ առին Արգիմիոս կայսերական քարտուղարը՝ որու խոստացան զինքը թագաւորեցնել:

713ի Հոգեգալստեան նախընթաց օրն էր (Յունիս 3) քաղաքին հիմնարկութեան տօնը: Յերեկը հիւնալի հանդէսներ ու թափօրներ կատարելէ ետքը կայսրը գնաց Ձեւքսիպպեան բաղանիքը ուր աննման խնջոյքի մը մէջ գրեթէ անզգայ ըլլալու աստիճան գինովնալով ինկաւ գահայից վրայ ու խոր քուն մը քաշեց: Կէս գիշերին մօտ Արգիմիոս և Ռուփոս կայսերական սրահը գիմեցին և հազարումէկ ահուգողի մէջ առին քնացած Փիլիպպիկոսը սաւաններու մէջ փաթթած՝ մութ սանգուղներէ իջնելով տարին ձիարձակարանը: Հոն դժբաղդ կայսեր աչքերը կուրցուցին: Երկրորդ օրը Ս. Սօֆիա եկեղեցիին մէջ Արգիմիոսը կայսր կը հրահուէր:

Վարդանի գահազուրկ վիճակի մէջ անցուցած կեանքին վրայ ո՛ր և է տեղեկութիւն մը չկայ: Ոմանք կ'ըսեն թէ Կ. Պոլսոյ փողոցներուն մէջ կը մուրար:

## Ա Ր Յ Ա Ւ Ա Ձ Գ

[713]

711ին Բիւզանդիոնի գահին վրայ կ'իշխէր Կոստանդին Կոպրոնիմոս՝ նշանաւոր իր պատկերամարտութեամբ. ասոր հայրը՝ Լեւոն Իսաւր՝ երախտաւորուած ըլլալով Արտաւազդ հայ իշխանէն՝ իր աղջիկը Աննա (Կոստանդինի քոյրը) ամուսնութեան տուաւ անոր և զայն Ոպսիկիոյ կոմս անուանեց: Արտաւազդ քաջ ու հզօր, վեհանձն ու փառանդ մարդ մըն էր, մանաւանդ ջերմ պաշտպան պատկերներու, այս պատճառով Կոստանդին աղէկ աչքով չէր նայեր իրեն:

Անգամ մը երբ թշնամիին վրայ քալելու համար Ոպսիկիոյ սահմաններէն կ'անցնէր Կոստանդին, լուր զրկեց Արտաւազդի թէ քրոջ զաւակները տեսնել կ'ուզէ անգամ մը: Արտաւազդ զիտնալով կայսեր նենգամտութիւնը, այս գործին մէջ զաւանանութիւն մը կռահեց ու մերժեց, յետոյ զինուորներուն հետ խորհուրդ ընելով բացէ ի բաց ապստամբութիւն հռչակեց և բոլոր ուժովը Կոպրոնիմոսի դէմ քալեց. ճամբան կայսեր իշխաններէն մէկուն հանդիպեցաւ որ կ'ուզէր տրգիլել յառաջխաղացումը. գերի բռնեց զայն ու սպաննեց. իսկ Կոստանդին վախէն փախաւ ամուր բերդ մը ապաստանեցաւ:



Արտաւազդի զինուորները զինքը կայսր հռչակեցին: Նորընտիր կայսրը անմիջապէս դեսպան զրկեց Կ. Պոլիս Մոնտա Պատրիկին որ կայսեր փոխանորդ էր: Մոնտա Ս. Սօֆիի մեծ եկեղեցիին մէջ խուռն բազմութեան մը առջեւ յայտարարեց թէ Կոպրոնիմոս մեռնելով Արտաւազդ կայսր ընտրուած է բանակին կողմէ:

Կոստանդին Ե. Կոպրոնիմոս Ամբողջ ժողովուրդը եւ Անաստաս պատրիարքը ուրախութեամբ ընդունեցին այս լուրը: Իսկ Մոնտա քաղաքին գուռները փակելով Կոպրոնիմոսի կուսակիցները ձերբակալեց ու ծեծել տալով բանտարկեց:

Արտաւազդ իր զօրազունդով Կ. Պոլիս եկաւ ու կայսերական մեծափառ շուքով ընդունուեցաւ: Կոպրոնիմոս ասիկա իմանալով ունեցած զինուորները ժողվեց ու հասաւ մինչեւ Խրիսուպոլիս (հիմակուան Սկիւտարը), սակայն բան մը չկրնալով ընել ետ դարձաւ ու ձմերեց Ամուրիա ուր նախապէս ապաստանած էր Արտաւազդի ձեռքէն փախած ժամանակ:

Արտաւազդ հրամայեց որ ամէն քաղաքներու մէջ յայտնապէս պատուըռուին սուրբերու պատկերները: Այս առիթով ժողովուրդը Վերջին ծայր ուրախ միաբանութեամբ ընդունեց զայն իբր կայսր և Անաստաս պատրիարքը կայսերական թագը դրաւ անոր գլուխը մեծ հանդէսով:

Մայիսին Արտաւազդ Ոպսիկիոյ գաւառը գնաց, ճամբան անցած նահանգները նուաճելով: Միւս կողմէ կոպրոնիմոս ալ ահագին բանակ մը կազմելով յարձակեցաւ Արտաւազդի վրայ և քչեց զայն մինչեւ Կիզիկոն քաղաքը: Հոն, Արտաւազդ իր դիրքը ամրացնելէ ետքը կոպրոնիմոսի վրայ զրկեց

(\*) Կոտաւազդին Ս. Կոպրոնիմոս. Բիզանդական կայսր, որդի Լեւոն Իսաւրի, ծնած է 718ին, մեռած 775ին. 719ին զահակից հռչակուած է, եւ կանուխէն իսկ մեծ ծառայութիւններ մատուցած կառավարութեան: 740ին իր շնորհիւ մեծ յաղթանակ մը տարուեցաւ Արաբներու վրայ Ոգրոյնօսի մօտ: Երբ 741ին Լեւոն Գ.ի մահուամբ միակ կայսր մնաց՝ երկիրը տակնուվրայ եղած էր կրօնական վէճերով. ստիպուեցաւ նաեւ իր զահը պաշտպանել Յազապահանջ Արտաւազդի դէմ (743): Ցետոյ կռուեցաւ Արաբներու դէմ որոնց յաղթեց, Եւրոպայի մէջ Գուլկաքները նուաճեց (763) եւ Սլաւներու դէմ քունի մը յաղթանակներ տարաւ: Իտալիոյ մէջ Հոմպարտացիները Ռավէննան գրաւելով էկզարքութիւնը ջնջուեցաւ (750): Գրօնական վէճը Հռոմի հետ վերջնական խզում մը յառաջ բերաւ եւ Բեքեն ու Մեծն Կարոլոս միջամտելով Բիզանդական ազդեցութիւնը ոչնչացաւ Իտալական Թերակղզիէն: Բայց ասոր հակառակ՝ Գոստանդին կայսրութեան ազդեցութիւնը երկար ատենի համար պահոված էր արեւելքի մէջ:

Իր կորովի վարչութիւնը իրական բարգաւաճում մը տուած էր միապետութեան: Դժբախտաբար պատկերամարտութեան վէճերը խորապէս վրդոված էին իր իշխանութիւնը: 754ի եկեղեցական ժողովը դատապարտած էր պատկերները. կայսրը այդ որոշումը զործադրեց անանկ խըստութեամբ մը որ 766ին գրեթէ հալածանքի դարձաւ: Վանականները մանաւանդ ենթակայ եղան իր խստութիւններուն: Ժամանակակից պատմիչները, որոնք ամբողջովին հակառակ էին իրեն, անարգական մակղորներով որակած են զինքը (գօբրօնիմ, գապալիմոս): Իբր կայսր մեծ արժանիք ունէր, զիւանագիտական ոգի, զինւորական հանճար, վարչական կարողութիւն չէին պակսեր իրեն:

Նիկիտ որդին, որ բալոր զօրաց սպարապետ էր, և իր ազգականներէն Տրդատ Պատրիկը: Սակայն առոնք յաղթուելով Տրդատ սպանուեցաւ պատերազմի դաշտին վրայ: Արտաւազդ քանի մը անյաջող կռիւներ ալ մղելէ ետքը տեսնելով որ չպիտի կրնայ յաղթել Կոպրոնիմոսի, վերադարձաւ Կ. Պոլիս: Կոպրոնիմոս նոյն տարին Սեպտեմբերին եկաւ պաշարեց Պոլիսը և զայն սովի բռնեց: Արտաւազդ ծովի ճամբով պաշար բերելու համար մարդիկ զրկած էր. Կոպրոնիմոս զանոնք բռնելով կուրցուց և Արտաւազդի զրկեց: Այս վերջինը սովէն նեղուելով քաղաքէն դուրս ելաւ և պատերազմի բռնուեցաւ Կոպրոնիմոսի հետ, բայց կրկին յաղթուեցաւ:

Միւս կողմէ Արտաւազդի Նիկիտ որդին որ օգնական զօրքով մինչեւ Սկիւտար հասած էր, յանկարծակիի գալով Կոպրոնիմոսի բանակէն յաղթուեցաւ ու գերի բռնուեցաւ: Կոպրոնիմոս կախել տուաւ իր քրոջը զաւակը. յետոյ ցամաքի կողմէն կրկին յարձակեցաւ քաղաքին վրայ: Արտաւազդ տեսնելով իր զօրութեան տկարութիւնը նաևով խոյս տուաւ նախկին իշխանութեան երկիրը Ոստիկէ, ուր ամրացաւ Պիզուի դղեակին մէջ Վասակ Պատրիկի հետ:

Կոպրոնիմոս Կ. Պոլիսի տիրելէ ետքը հնարքով մը բռնեց Արտաւազդը և երկու որդիները ու կուրցուց զանոնք. Վասակը սպաննելով գլուխը բարձր տեղէ մը երեք օր կախեց: Անաստաս պատրիարքը որ Արտաւազդի գլուխը թագ դրած էր աչքերէն զրկուեցաւ և էշու մը վրայ հեծցուելով երեսը աքիին կողմը քաղաքին մէջ պտտցուեցաւ: Կ. Պոլիս անգամ զերծ չմնաց Կոպրոնիմոսի վրիժառուիթենէն. ամբողջ քաղաքը կողոպտուեցաւ ու թալլուեցաւ զինուորներու կողսէ:



## Մ Ա Ր Ի Ա Ն Է

[ 788—795 ]

Իրէնէ կայսրուհին իր իշխանութեան սկիզբէն իսկ ծրագրած էր զաւելին Կոստանդին Չ.ի (\*) ամուսնութիւնը Մեծն Կարոլոսի աղջիկներէն մէկուն Ռոթրիտի հետ. Էքս-լա-Շարէլլի մէջ տեսնուած էր յոյն պալատական ներքինի մը որ Ռոթրիտի կը սորվեցնէր իր ապագայ հայրենիքին բարքերն ու լեզուն: Բայց Մեծն Կարոլոս վախնալով որ մի՛ գուցէ Կոստանդին Չ.ի զաւակները ապագային տառնձգութիւն ընեն իր երկիրներուն մէջ, (սմանք ալ նոյն գաղափարը կը վերագրեն Իրէնէի, որ կը վախնար թէ իր զաւելին տկարութենէն Կարոլոս օգուտ կը քաղէ՝ արեւելեան կայսրութիւնը միացնելու արեւմտեանին) ամուսնական բանակցութիւնները խզուեցան: Կոստանդին Չ. հեռուէն սիրահարած էր արեւմտեան իշխանուհիին, Իրէնէ չուզեց զայն այդ տրամագրութեան տակ թողուլ և ջանադիր եղաւ գրեթէ բռնի ամուսնացնել տալ. կայսրութեան ամէն կողմը

(\*) Կոստանդին Չ. Բիզանդական կայսր, որդի Լեւոն Գ.ի. ծնած 771ին, գահընկեց ու կուրցած 797ին, Հագիւ տասը տարեկան էր կրթ հօրը յաջորդեց (780) եւ տասը տարի ալ մօրը խնամակալութեան տակ իշխեց: Փառասէր Իրէնէ անոր դաստիարակութեան բնաւ հոգ չի տարաւ. երկար ատեն զայն իշխանութենէ հեռու պահելու համար: Զինուորական ազատամբումիւն մը՝ խնամակալուհին տապալելով կառավարութիւնը տուաւ Կոստանդինի (790), բայց այս վերջինը անձնական քաջութենէ մը զատ ուրիշ յատկութիւն չէր ժառանգած նախահայրերէն: Գուլկարներէն (792) ու Արարներէն յաղթուելով բանակին մէջ ժողովրդականութիւնը կորսնցուց. մնացած համակրողներն ալ քաջութեան երբ 792ին կրկին Իրէնէի խնամակալութեան տակ մտաւ: Յրկնակ ամուսնութիւնը՝ կայսրուհիին պատուոյ կիներէն մէկուն հետ, վանկաններու ընդդիմութեան հանդիպելով պատճառ եղաւ իր անկումին: Իրէնէ իշխանութիւնը կրկին ձեռք առաւ եւ իր զաւակը Կոստանդինը կուրցնել տուաւ:

մարդ հանեց որպէսզի փնտռեն գտնեն որոշ պայմաններ լրացնող գեղեցիկ աղջիկները. այդ պայմաններն էին տարիքը, մէջքի նրբութիւնը և կօշիկներուն մեծութիւնը:

Ապագայ կայսրուհին որոնելու պաշտօն ունեցող խումբը, որուն գլուխը կը գտնուէր Թէոփանէս մեծ ախոռապետը, հասաւ Փոքր Հայք: Իրիկուն մը մեծ ու փառաւոր տուն մը հանդիպելով որոշեցին գիշերը հոն անցնել: Տան-



Կոստանդին Զ. և Իւլեն

տէրը սրբակեաց մէկն էր, Փիլարետ անունով, որ բոլոր հարստութիւնը աղքատներուն բաժնելով՝ ինքը աղքատացած էր: Ջանաց կարելի եղածին չափ մեծ շուքով ընդունիլ կայսերական հիւրերը. «Մեզի երես ճերմկցնելիք ընթրիք մը պատրաստէ՛ք ըսաւ կնոջը. «Մի՛նչ հրամցնեմ, պատասխանեց խեղճ կինը, տունին մէջ շնորհքով ուտելիք բան մը չմնաց որ»: Հիւրերը սակայն խիստ գոհ մնացին այս ընդունելութենէն և ծերունին հարցափորձելով տեսան որ ամուսնանալու տարիքը թեւակոխած երեք աղջիկ ունի: «Յանուն կայսեր, որ Աստուծա՛յ ընտրուած է, ըսին, կը պահանջենք որ այդ աղջիկները մեզի երեւին»:

Նրեքն ալ հլանալի կերպով գեղեցիկ էին, մանաւանդ անոնցմէ մին՝ Մարիանէ [քանի մը հեղինակներ Մարիամ անունը կուտան], որ պահանջուած երեք պայմանները՝ տարիքի, մէջքի նրբութեան և ոտքի մեծութեան՝ կը լրացնէր իր վրայ:

Կայսեր պաշտօնակալները՝ ձերուներին ամբողջ ընտանիքը առին Կ. Պոլիս բերին: Արդէն տասներկու քի չափ գեռատի աղջիկներ հաւաքուած էին, ամէնքն ալ գեղեցիկ ու մեծ մասամբ հարուստ ու բարձր ընտանիքներէ սերած: Մարիանէ առաջարկեց ասոնց որ խօսք տան թէ ո՛վ որ կայսրուհի ընտրուի, մերժուածներուն հողը վրան առնէ: Օրի-

**Իրէճէ.** — Կայսրուհի Բիւզանդիոնի (780—790 եւ 792—802) Ենած է Աթէնքի մէջ 752ին, ազրատ ընտանիքէ մը. շնորհիւ իր գեղեցկութեան եւ խելքին 766ին ամուսնացաւ Կոստանդին Ե.ի զաւկին Լևոն Գ.ի հետ եւ անոր մահէն ետքը (780) անչափահաս զաւկին Կոստանդին Զ.ի խնամակալութիւնը ստանձնեց: Պատկերներու պաշտամունքին սերտիւ յարած ըլլալուն՝ Արաբներու հետ հաշտութիւն զոյսցնելէ (783) եւ Մակեդոնիոյ ու Յունաստանի Սլաւները նուաճելէ հտքը, կրօնական նոր քաղաքականութիւն մը բռնեց: Քարասիւս նորընտիր պատրիարքը (784) իրեն ձեռնտու եղաւ. Նիկիոյ Ժողովը (787) վերահաստատեց պաշտօնապէս պատկերներու պաշտամունքը: Բայց, երբ նէ շարունակեց իր չափահաս զաւկին վրայ բացարձակ խնամակալի իշխանութիւնը, զինուորական յեղափոխութիւն մը զայն տապալեց (790). Կոստանդին Զ. անխոհեմութիւն ըրաւ իր մայրը եւ անոր խորհրդականները իշխանութեան մէջ խառնելու (792), իրէնէ օգուտ քաղելով Կոստանդինի կրկնակ ամուսնութեան կրօնական դասակարգի մէջ յառաջ քերած խռովութենէն, զահընկէց ըրաւ եւ կուրցուց իր զաւակը (797): Այն ատեն զահին միակ տէրը ինք մնալով իրեն խորհրդակից ըրաւ Սթաւրաքիոս եւ Ալեքիոս ներքինիները: Ասոնց խորհրդով Հարուն էլ Բաշիտի հետ կնքեց նոր ու ամօթալի հաշտութիւն մը (798), մինչ անդին Եարլըման կը վերականգնէր Արեւմտեան կայսրութիւնը (800). Պալատական դաւադրութեամբ մը զահէն զրկուելով արտրուեցաւ Լեսպոս ուր մեռաւ (803): Ապրուստը ճարելու համար ստիպուած էր, կ'ըսեն թուրք մանել: Յունական եկեղեցին զայն սրբուհիներու կաթը անցուց եւ Թօնը կը կատարէ 15 Օգոստոսին:

որդներէն մին արհամարհալից կերպով մը պատասխանեց .  
«Ո՛հ, ձեր մէջէն ամէնէն գեղեցիկը, հարուստը և ազնուա-  
կան ծնունդ ունեցողը ե՛ս եմ . վստահ եմ որ կայսրը ինծի  
պիտի հաւնի . իսկ դո՛ւք, խեղճ աղջիկներ, որ գեղեցիկ  
դէմքէ զատ ուրիշ բան չունիք, աղէկ կ'ընէք եթէ հիմակ-  
ուընէ ետ քաշուիք » :

Բայց երբ Իրէնէ կայսրուհին, զաւակը և առաջին նա-  
խարարը՝ հարսնցուն որոշելու ելան, այս մեծխօսիկ օրիոր-  
դին ըսին . « Հիանալի գեղեցկութիւն մը ունիք; օրիորդ, բայց  
կայսրի մը կ'ինը ըլլալու յարմարութիւն չէք ցուցներ » :  
Ընդհակառակն Մարիանէ առաջին անգամէն իսկ ուշագրօ-  
թիւն գրուեց և ընդունուեցաւ կայսեր հարսնութեան :

Մարիանէ գեղեցիկ էր, խելացի ու ջերմեռանդ . խոնարհ  
ընտանիքէ մը սերած ըլլալուն ամէն բան Իրէնէի պիտի պար-  
տէր, հետեւաբար մայր-կայսրուհին այս կողմէ վախճալիք  
բան մը չէր ունենար : Ամուսնութիւնը որոշուեցաւ և հարս-  
նիքը տեղի ունեցաւ 788ի Նոյեմբերին մէջ :

Մարիանէ երկու աղջիկ ունեցաւ՝ Եւփրոսինէ և Իրէնէ :  
Սակայն Կոստանդին Զ. լքած էր զինքը և խենդի պէս սի-  
րահարած մայր-կայսրուհին պատուոյ օրիորդներէն մէկուն՝  
Թէոտոզի : Իրէնէ աչք կը գոցեր և գաղտնի կը քաջալերէր  
այս սէրը, նոյն իսկ խորհուրդ տուաւ կայսեր արձակել իր  
կինը Մարիանէն և ամուսնանալ Թէոտոզի հետ, որ ազնը-  
ուական ցեղէ էր ու բարձր ընտանիքներէ շատին հետ ազ-  
գականութեան կապ ունէր :

Այս գործին մէջ Իրէնէ մաքիազէլական դիւանագիտու-  
թիւն մը կը բանեցնէր : Իր նպատակն էր Կոստանդին Զ. ի  
ժողովրդականութիւնը կորսնցնել տալ, բանակն ու կղերը  
անոր դէմ գրգռել ու գահազուրկ ընելով զայն իշխանու-  
թիւնը իր իսկ ձեռքն անցնել :

795ին էր, Կոստանդին յայտարարեց որ իր կինը զինքը  
թունաւորել փորձեր է . կը կարծէր թէ քանի որ ինք կայսր



է և խօսքը հպատակներու կ'ուղղէ, ուզեն չուզեն պիտի հաւատան իրեն: Թիկնապահ մը զրկեց պատրիարքին հրամայելով որ եկեղեցին լուծէ իրենց ամուսնութիւնը: Բայց Թարասիօս չուտով համոզուող մարդ չէր, պատասխանեց թէ օրէնքը ամուսնալուծման համար մէկ պատճառ մը կ'ընդունի՝ ապացոյցով հաստատուած շնութիւնը: Պարապ տեղը կոտանդին Ձ. պատրիարքը պալատ կանչեց, համոզելու համար թէ ոճիրը յայտնի է, ապացուցուած է, և մահը կամ ցկեանս վանքի մէջ բանտարկութիւնը միայն կրնայ իբր պատիժ տրուիլ յանցաւորին. ամանով պղտոր հեղուկ մը բերել տըռուա՝ ըսելով թէ այդ է զինքը սպաննելու յատկացուած թոյնը: Թարասիօս միշտ կը մերժէր, ի վերջոյ սպառնաց բանադրել կայսրը՝ եթէ աւելի յառաջ երթայ: Թիկնապահները սուր ի ձեռին սպառնացին պատրիարքին՝ հնազանդիլ կայսեր հրամաններուն. բայց և ո՛չ մէկ բան կրցաւ ստիպել անդրդուելի Թարասիօսը:

Կոստանդին տեսնելով որ այս կողմէ ճար չկայ, բռնի Մարիանէն փակեց վանքի մը մէջ (793 Յունուար) և ամուսնացաւ Թէոտոզի հետ. հարսնիքը տեւեց քառասուն օր: Թարասիօս մերժեց օրհնել այս ապօրինի միութիւնը, բայց դիւանագիտութեամբ վարուելով, ձեռքի տակէ թողուց որ ուրիշ կղերական մը պսակը կատարէ: Ո՛չ կայսրը բանադրուեցաւ, ո՛չ ալ յանցաւոր կղերականը պատժուեցաւ:

Ամբողջ բիւզանդական քրիստոնէութիւնը, մինչև հեռաւոր գաւառներուն խորերը, զայրոյթ զգաց այս ոճիրէն, որ իրէնէի ճարտար դիւանագիտութեան շնորհիւ պիտի փութացնէր կոստանդին Ձ. ի կորուստը:

—————

**Չ Ա Ր Գ Ա Ն Ք Ո Ւ Ի Ք**

[803]

803 Մայիս 4ին Նիկիեփոր Ա. Լողոթէթ յաջողեցաւ դահլնկէց ընել իրէնէ կայսրուհին և անոր տեղը կայսր հռչակ-

ուրի: Մակայն նոյն տարին Յուլիա 19ին խմացաւ որ Փոքր Ասիոյ յունական զօրաց ընդհանուր հրամանատար Վարդան Պատրիկ՝ կայսր հռչակուելով Արեւելեան զօրաբանակէն, ահագին բազմութեամբ կ. Պոլիսի վրայ կը քալէ: Վարդան աղքատուական սերունդէ էր (Մամիկոնեան ցեղէն կ'ըսեն ոմանք), միակ եղական անձն էր իր ժամանակի բիւզանդական կայսրութեան մէջ որ իրաւամբ առաջնակարգ զօրապետի համբաւ կը վայելէր:

Ճամբան ամէն կողմէ ժողովուրդն ու զօրքերը մեծ համակրութիւնով կը դիմաւորէին հայկազն կայսրը, մանաւանդ Փռիւքիոյ և Բիւթանիոյ մէջ: Նիկոմիդիայէն անցնելով, Վարդան եկաւ բանակ դրաւ Սկիւտարի հանդէպ: Հոս իր զօրավարներէն երկուքը՝ Լեւոն Հայկազն և Միքայէլ Թլուտտ, լքելով իրենց կայսրը, յարեցան Նիկեփորի(\*) և Վարդան, որ արդէն իսկ մեծ փոփաք չունէր կայսրութեան, այս մատնութենէն խորապէս զղուելով զօրքերը հեռացուց Սկիւտարէն և զնաց Բիւթանիա՝ Ողիմպոս լեռան մօտ Մալազի պղտիկ քաղաքը: Հոնկէ լուր գրկեց Նիկեփորի թէ կը հրաժարի կայսրութենէ



Նիկեփոր Ա. Լոզոբէր

(\*) Նիկեփոր Ա. Լոզոբէր. — Բիւզանդական կայսր (302—311), իրէնէ կայսրուհիին իշխանութեան ժամանակ մեծ Լոզոբէր էր. 302 չոկտմ. յեղափոխութեան ատեն զահ բարձրացաւ: Զափսուոր քաղաքականոնութիւնով մը քանաց պատկերամարտներուն ու վանականներուն միջեւ հաշտարար ընթացք մը բռնել: Արտաքին աշխարհավարութեան մէջ քանաց Շարլըմայնի հետ միջին ընթացք մը գտնել (303): Բայց Արարներու հետ ստորնացուցիչ հաշտութիւն մը կնքեց (306): Զկրցաւ Պուլկարներն ալ նուաճել. Քրուս Խանին հետ պատերազմելով սպաննուեցաւ:

եթէ Նիկիեփոր խոստանայ չմնասել իրեն ու իր մարդոց :  
 Բնականաբար Նիկիեփոր ուրախութեամբ ընդունեց այս  
 առաջարկը : Անմիջապէս երդմնագիր մը ստորագրեց , զոր  
 վաւերացուցին Թարասիոս պատրիարքը և աւագանին : Ա-  
 սով ալ չգտնանալով Նիկիեփոր՝ Վարդանին զրկեց իրր գրա-  
 ւական՝ ոսկիէ խաչը որ միշտ վզէն կախուած կը կրէր :

Վարդան հաւատարիմ թիկնապահի մը շեռ գիշերանց  
 փախաւ բանակէն , հասնելով Գիուս պզտիկ քաղաքը (հիմակ-  
 ուան կէմլէյիկ) դիմեց Հերակլի վանքը : Վանահայրը քունէն  
 արթնցնելով հրամայեց որ մազերը կտրէ և կրօնաւորի մը  
 հագուստ տայ . սակայն ծերունին ընդդիմացաւ ասոր մտա-  
 ծելով թէ դիմացինը կայսր մըն է : Վարդան , ճարահատ , սու-  
 բը քաշեց և իր ձեռքովը կտրեց դանդուր մազերը , յետոյ  
 զինուորական հագուստը հանելով պատառատուն զգեստ մը  
 անցուց վրան : Ծովափը կը սպասէր Նիկիեփորի շրկած մա-  
 կոյկը որ Սարակինոսաց հռչակաւոր յողթականը պիտի փո-  
 խադրէր Բոսթի (Քընալը կղզին) (803 Սեպտ . 8) :

Վարդան իր բաղդաւորութեան միջոցին հոն շինած էր  
 մենաստան մը ընդարձակ մշակելի հողերով և համեստ խցիկ-  
 ներով : Քաշուեցաւ իր երախտաւորեալներուն քով և անոնց  
 պէս սկսաւ պարտէզ մշակելու զբաղիլ , Սարբաս կեղծ անու-  
 նին տակ ծածկուած :

Սակայն Նիկիեփոր հանգիստ չունէր . Վարդանի կրօնա-  
 ւորական նախանձայուզութիւնը լոկ կեղծիք կը թուէր ի-  
 րեն : Հազիւ քանի մը շարաթ անցեր էր այն օրէն երբ ա-  
 բուելեան զօրաբանակի նախկին մեծ զօրապետը կը ճգնէր  
 Բոսթիի մենաստանին մէջ , փոթորկալից գիշեր մը խուճը  
 մը զինեալ մարդիկ մտան Վարդանին սենեակը և անոր  
 աչքերը կուրցուցին :

Այս դէպքը մեծ յուզում պատճառեց ամբողջ Բիւզան-  
 դական կայսրութեան մէջ . պարապ տեղը Նիկիեփոր օրերով  
 սուտ արցունք թափեց և երդումներով ուղեց հաստատել իր

անմոլորութիւնը. ժողովուրդը ուրիշ պատճառներ ալ ունէր իրմ, դանդատելու և ապստամբելու:

Վարդան սակայն, սոսկալի վէրքերը բժշկուելէ ետքը մեծ արիութեամբ կը դիմանար այս սոսկալի մահուան: Օրերը կ'անցընէր ապաշխարութեամբ, կենդանիի մորթ կը հագնէր իբր հագուստ, բոկոտն կը պտըտէր, մինակ ջուր կը խմէր ու չոր հաց կ'ուտէր: Հրաժարեցաւ տեսակցելէ իր կնոջ ու զաւակներուն հետ: Ամէն կողմէ հազարուոր ուխտաւորներ կը դիմէին այս կայսր-ճգնաւորին և հիւանդներ կը բերէին որ բժշկէ: Վարդան երկար ատեն ապրեցաւ ու մեռաւ Լեւոն Հայկազն կայսեր ժամանակ:

### ԱՐՏԱՒԻՐ [ԿԱՄՍԱՐԱԿԱՆ]

[808]

Նիկեփոր այն աստճան ատելի դարձած էր որ տէրութեան մեծամեծները դաւադրութիւն մը կազմելով կայսր հռչակեցին Արշաւիր հայ պատրիկը, որ կայսրութեան գանձապետն էր և իբր իմաստուն մէկը ճանչցուած: Նիկեփոր ժամանակին իմանալով այս դաւադրութիւնը, ձերբակալել տուաւ Արշաւիրը և զայն չարաչար ծեծելէ ետքը մազերը կտրել տուաւ ու աքսորեց Բիւթանիա, վանքի մը մէջ կրօնաւոր ըլլալու: Կ'ըսեն, առանց սակայն կարենալ հաստատելու թէ՛ այս դաւադրութեան մէջ էր նաև Արշաւիրի փեսայ և Վարդի որդի՝ Լեւոն Արծրունի. պատճառով մը Նիկեփոր զայն ալ ձերբակալել տուաւ և գանակոծելէ ետքը մեռնաստան մը աքսորեց:

### ԼԵՒՈՆ Ե. ՀԱՅԿԱԶՆ [ԱՐՄԻՐՈՒՆԻ]

[813—820]

Լեւոն Ե. որդին էր Վարդ Պատրիկին՝ որ Իրէնէի Կոստանդին որդւոյն դէմ դաւաճանած ըլլալուն համար Հայաս-

տան աքսորուած էր: Վարդ 791ին Պուլկարներու դէմ պատերազմի ժամանակ սպաննուեցաւ: Լեւոնի ծննդեան թուականը յայտնի չէ: Հաւանական է որ ծնած ըլլայ Սիւնեաց Ամաղուա գիւղը: Ինք ՀԱՅ ԷՐ էր և Արծրունեաց ցեղէն. ասոր կը վկայեն բոլոր օտար պատմիչները որոնք կը կոչեն Léon l'Arménien. Իսկ ժամանակակից պատմիչները բացէ ի բաց կ'ընդունին անոր Հայ ըլլալը, աւելցնելով թէ Լեւոն սերած էր Վասորեստանցի այն արիւնարբու աւազակներէն որոնք իրենց Սենեքերիմ հայրը սպաննելով՝ Հայոց գաւառները փախան ու ազատեցան:

Լեւոն՝ Թէոդոսիա կայսրուհիէն ունեցաւ հինգ զաւակներ, 1. Սմբատ [կամ Կոստանդին, որ հօրը գահակից եղաւ], 2. Վասիլ [կրօնաւոր ըլլալէն հաքը Եւստաթէոս անունը առաւ], 3. Գրիգոր, 4. Թէոդոս եւ 5. աղջիկ մը որու անունը չը յիշուիր և որ սպաննուեցաւ Ռէնզարէի կնոջ կողմէ կատաղութեան մէկ վայրկենին:

Լեւոն Հայկազն՝ Փեդրա աւանին մէջ անշուք պատանեկութիւն մը անցընելէ ետ-

քը Բիւզանդիոն եկաւ բաղդ փնտռելու: Հոն ծանօթացաւ Արշաւիր հայազգի Պատրիկին որ երկու աղջիկ ունէր, Մարիամ՝ գեղեցիկ ըսուածը [Բալի Մարիա] և Թէոդոսիա: Լեւոն ամուսնացաւ այս վերջինին հետ:

Կարճահասակ էր Լեւոն, դէր ու մտղ. գիմագիծերը խիստ՝ բայց կանոնաւոր էր, յօնքերը սեւ, նայուածքը սարսափեցնող. առիւծի ձայն ունէր. գլխու մազերը այնքան



Լեւոն Ե. Հայկազն

խիտ էին որ երբ Նիկեփոր պարիարքը գլուխը թագ պիտի դնէր, ձեռքերը ցաւցուց իրր թէ փուշի դպած ըլլար Մարմնական անհղ ոյժի մը հետ ունէր նաեւ ճկուն ու նենգաւոր միտք մը: Երգմնազանցութիւն, բարերարի դէմ զէնք առնել, անգթութիւն՝ սովորական բաներ էին իրեն՝ կրք մտադրած նպատակին հասնիլ ուղէր:

Ընթերցողին ծանօթ է արդէն իր սպարապետին՝ Վարդան թուրքի դէմ ըրած մատնութիւնը. իրր վարձք ասոր Վարդանի պաշտօնը ստացաւ. Արեւելքի զօրապետ կարգեցին զինքը. ստացաւ նաև Չինոնի ապարանքը և թագխատէա: Իսկ իր գաւակիցը Միքայէլ ալ կոմսութեան տիտղոս առաւ՝ ընդարձակ կալուածներով միասին:

Լեւոն՝ իրր սպարապետ Արեւելքի, Կապադօպկիա զրկուած էր արարական հոսանքին դէմ թուժք մը դնելու. սակայն ինքզինքը բացարձակ իշխանութեան սէջ տեսնելով անձնատուր եղաւ հաճոյքներու, Սարակինոսները յարձակեցան ու յաղթեցին: Նիկեփոր՝ նեղանալով՝ պաշտօնանկ ըրաւ Լեւոնը, զայն գանակոծել տուաւ և աքսորեց:

Նոյն տարին Յուլիսին Պուլկարական պատերազմը բացուեցաւ: Բիւզանդացիք յաղթուեցան, Նիկեփոր սպաննուեցաւ և Պուլկարներու թագաւորը Նիկեփորի գանկը ոսկեզօծել տալով արքունի բաժակի տեղ գործածեց:

Նոյն պատերազմին սէջ թագաժառանգն ալ ծանր կերպով վիրաւորուած էր, և որդին փոքրամարմին ու տխեղծ ըլլալով ժողովուրդէն չէր սիրուէր: Իրեն տեղ կայսր հռչակուեցաւ Միքայէլ Կիւրոպաղատը՝ Ռէնգարէ կոչուած (811 Հոկտ. 2): Սակայն աս ալ թոյլ ու երկչոտ մէկը ըլլալուն կառավարութեան սանձը ստանձնեց Պրոկոպիա թագուհին: Միքայէլ իր գահակալութեան առաջին օրը նշանաւոր գործով մը փառաւորելու համար Լեւոնը աքսորէն կանչեց ու իր հին պաշտօնին սէջ վերահաստատեց:

Պուլկարները, սակայն, կը յառաջանային: Միքայէլ մեծ

ևռանդով պատերազմի կը պատրաստուէր. Հայաստանի, Ասորեստանի, Կասպղովկիոյ բոլոր գունդերը փոխադրեց Եւրոպա (813 Մայիս) և կազմեց բանակ մը որ Թշնամիէն տասն անգամ աւելի զօրաւոր էր:

Բաղխուամը տեղի ունեցաւ Ազրիանուպոլսոյ մօտ (813 Յունիս 22): Լեւոն պարտութեան մը կը փախաքէր որպէսզի Միքայէլ ասեկի դառնայ զօրքերուն և ինք անոր տեղը կայսր ըլլայ: Կախին ամէնէն տաք պահուն, Լեւոն իր գունդերով ետ քաշուեցաւ: Յոյները ահաբեկ փախչիլ սկսան: Ռէնգարէ ալ բանակը Լեւոնի յանձնելով Պոլիս քաշուեցաւ:

Հայ զօրավարը իր կուսակիցները ցրուեց բանակին մէջ որոնք զինուորները կը գրգռէին. «Տէրութիւնը պիտի կործանի այս կայսեր ձեռքին մէջ, կ'ըսէին. հիմա ճիշդ կը կատարուի այն առակը թէ եղնիկ մը առիւծներու կը հրամայէ. ինք կը փախչի պալատ և մեզի Պուլկարներու գիմաց վտանգին մէջ կը թողու: Շո'ւտ մեզի նոր կայսր մը ընտրենք. Կեցցէ՛ Լեւոն »:



Միքայել Ռենգարէ

Զօրքը խուժեց Լեւոնի վրանը և պահանջեց որ ընդունի կայսր ըլլալ: Հնարամիտ զօրապետը առ երեսս մերժեց. Միքայէլ Թլուստ [կամ Միքայէլ Բէգ] սուրը քաշելով Լեւոնի կուրծքին կռթնցուց և սպառնաց սպաննել զինքը եթէ զինուորներուն պահանջքը չընդունի: Լեւոն հաւանութիւնը առուաւ վերջապէս և Բիւզանդական բանակը քաշեց Պոլսոյ վրայ:

Ռէնգարէ ամէն յոյս կորսուած տեսնելով ինքնիրենը հրաժարեցաւ, մինչ Պրոկոպիոս կայսրուհին կատաղութեան

փոթորիկներ կը փլցնէր Լեւոնի կնոջ՝ Թէոդոսիայի զլխուն։  
 Իսկ Լեւոն (ՅԱՅ Յուլիս 10) Ոսկեղէն դռնէն Բիւզանդիոն  
 կը մտնէր և յաջորդ օրն ալ Մ. Սօֆիա մայր եկեղեցիին մէջ  
 կայսր կ'օծուէր նիկեփոս պատրիարքին ձեռքով։

Հանդէսին նախորդ օրը Լեւոն պալատ դացած ատեն  
 Խալդէ ըսուած տեղը Յիսուսի պատկերին առջեւ կանգ առ-  
 նելով կրք զօրավարի հազուստները հանելով ձիւրանի կը  
 հագնէր, Միքայէլ Թլուսա իսկոյն հագաւ Լեւոնի հազուստ-  
 ները. ասանկով ինքզինքը Արեւելքի զօրավար տնուանած  
 կ'ըլլար և կերպով մըն ալ գուշակել տուած կ'ըլլար թէ օրին  
 մէկը Լեւոնի պիտի յաջորդէ կայսերական զահին վրայ։

Լեւոն ամէնէն առաջ մտածեց զահը ամրացնել. Ռէն  
 գառէն ածիլելով Բրօթի կղզին աքսորեց, որդիներն ալ ներ-  
 քինացուց. ասոնցմէ մին՝ Մ. Իգնատիոս՝ Կ. Պոլսոյ Պատ-  
 րիարք եղաւ վերջէն։ Յետոյ իր կուսակիցներուն մեծամեծ  
 պաշտօններ առուաւ, Միքայէլ Թլուսա ընդհանուր սպարա-  
 պետ կարգուեցաւ, իսկ Մանուէլ Հայկազն՝ Հայկական բա-  
 նակաթեմին զօրավար։

Պուկարներու կրումնոս թագաւորը օգտուելով Բիւզան-  
 դացիներուն ներքին կռիւներէն, յառաջացած էր մինչեւ Կ.  
 Պոլս և մայրաքաղաքին շուրջը խրամ բանալով պատնէշ  
 շինած ու պաշարած էր զայն։ Իմաց տուաւ Լեւոնի՝ որ հա-  
 զիւ շարաթէ մը ի վեր գահը ելած էր, թէ՛ Բիւզանդիոն իր  
 աւերիչ ձեռքէն երեք պայմանով միայն կրնայ ազատիլ։

1. Յոյները պէտք է տարեկան տուրք վճարեն,

2. կրումնոս պիտի պաշտի Բիւզանդիոնի մէջ և ո'ր աղ-  
 ջկան որ հաւնի հետը պիտի տանի իբր աւար,

3. կրումնոս իր նիզակը պիտի միտէ Ոսկեղէն դրան մէջ  
 իբր յաղթանակի նշան։

Մինչդեռ բանակցութիւնները կը շարունակուէին, բար-  
 բարոսները միւս կողմէ հետաքրքրական հանդէսներ կը կա-  
 տարէին։ Երբեմն թագաւորը Պլաքեռնեանց դրան մօտ (հի-



մակուան էյուպ) ծովեզերք կ'երթար ոտքն ու գլուխը լուտ-  
լու, յիտոյ իր ձեռքով զինուորներուն վրայ ջուր կը սրսկէր :  
Թագաւորին ճամբուն երկու կողմը կեցած կ'ըլլային իր  
կիները, որոնք թագաւորին անցած ատենը երգել կ'սկսէին՝  
երկրպագելով անոր : Այս հանգէսը կը փակուէր զոհերով ու-  
րոնք շատ անգամ մարդկային ալ կ'ըլլային :

Լեւոն կայսրը ԿրուՄնոսի պատասխանեց որ երկու կողմէ  
վեց անգէն մարդիկ վիճարանին այս խնդրոյն վրայ . երկու  
թագաւորներն ալ մաս չպիտի կազմէին յանձնաժողովներուն :  
Լեւոն աղէկ զիտէր որ ԿրուՄնոս անձամբ պիտի գար այդ  
բանակցութեանց մտանկցելու, ուստի երեք ազեղնաւոր  
ծածկեց պարիսպին մօտ թումրի մը տակ : Որոշեալ օրը վեց  
Պուլկարներու հետ ԿրուՄնոս ալ եկաւ ձի հեծած : Լեւոն նը-  
շան ըրաւ պարիսպէն . նետերու տարափ մը սկսաւ տեղալ  
բարբարոս թագաւորին վրայ, որ կրցաւ փախչիլ քանի մը  
թեթեւ վէրքեր միայն ստանալով :

ԿրուՄնոս կատաղած Վոսփորի, Պրոնախի եզերքները  
քանդեց, Պոլսոյ շրջակաները աւերեց և անբաւ աւարով դար-  
ձաւ Ադրիանուպոլիս, զոր արդէն իր եղբայրը կը պաշարէր .  
առաւ քաղաքը, աւարի տուաւ և 12,000 գերի տարաւ Դա-  
նուբի եզերքը բնակեցնելու . ասոնց մէջ էր հայազգի տղայ  
մը, որ յետոյ Վասիլ Արչակունի կայսրը պիտի ըլլար (813) :

Յաջորդ տարին անագին պատրաստութիւններ տեսաւ  
Կոստանդնուպոլիսն ալ առնելու . որոշած էր յարձակումը  
կատարել Պլաքեռնեանց դրան կողմէն՝ ուր վիրաւորուած  
էր : Լոն միայն մէկ պարիսպ կար, Լեւոն փութով երկրորդ  
մըն ալ շինեց, պատնէշով ամրացուց և սպասեց : Պուլկար-  
ներու բանակը ստուարացած էր Աւարներով և Սքլաւոննե-  
րով . կ'ըսեն թէ տասը հազար եզներ քաշելով կը բերէին  
պաշարման անագին մեքենաները : Սակայն ԿրուՄնոսի երակ-  
ներէն մէկը պայթելով ականջէն ու բերնէն արիւն եկաւ ու  
մեռաւ (814 Ապրիլ 13 Աւագ Եջ. օրը) :

կրուձնութի յաջորդեց կրկնթաղան, որ դահին հետ մէկ-տեղ նախորդին մարտական ոգին ալ ժառանգած էր. ասիկա շարունակեց Պոլսոյ վրայ քաշել, բայց Լեւոն չթողուց որ քաղաքին մօտենայ, պարիսպները նորոգելէն ետքը Մեսդրիս իջաւ և հոն ճակատեցաւ Պուլկարներուն դէմ:

Առաջին բաղխումին Բիւզանդացիները յաղթահարուած փախչիլ սկսան: Լեւոն քաջերու գունդով մը բլուրին ծայրը կեցած կը դիտէր, իրեններուն փախուտը տեսնելով Քօրականք, գոչեց քովիններուն, յաղթութիւնը մերն է, ետեւէս եկէք: Եւ բլուրէն վար խոյանալով թշնամի բանակին մէջ մտաւ, շարդեց, փշրեց, փախցուց և յաղթութիւնը ապահովեց իրեններուն:

Յաջորդ գարնան (815) Լեւոն ինք անձամբ գնաց Պուլկարներու դէմ: Պուլկարները յաջողեցան կայսեր բանակը պաշարել ու զինքը սովի բռնել: Օր մը Լեւոն բանակին մէջ պտըտեցաւ, առանց բան մը ըսելու քաջերու ընտրութիւն մը ընելով գունդ մը կազմեց ու վրանը քաշուեցաւ: Գիշերը հասեր էր արդէն, Յոյները կը քնանային ճերմակ վրաններուն տակ. «Ինծի հետեւեցէ՛ք» ըսաւ կայսրը քաջերու գունդին և գիշերուան մթութեան մէջ բլուրի մը ետին անհետ եղան:

Առտուն անկարելի է նկարագրել Յունական բանակին ահուսարտափը երբ տեսան թէ կայսրը փախեր է: Իսկ Պուլկարները այս լուրը առնելով յաղթութեան վրայ ապահովուած՝ ամբողջ օրը խնջայքներով անցուցին ու գիշերը խորքունի մէջ թաղուեցան:

Միւս կողմէ Լեւոն այս բանին կ'սպասէր. երբ թշնամի բանակին մէջ ամէն շարժում դադարեցաւ, իր քաջերուն գըլուխը անցած յանկարծակի յարձակեցաւ անոնց վրայ, դիմացը ելածը շարդելով ու ահագին վայնասուն մը հանելով. մարդ ալ զրկեց բիւզանդական բանակին զանոնք կռիւի կանչելու համար: Պուլկարները՝ քնաթաթախ, ոմանք ան-

զէն, ոմանք կէս-գինով, սկսան զիրար ջարդել և ջարգուիլ Յայներէն: Մեռնողներուն մէջ էր Կրիթադոն թագաւորը: Ասոր յաջորդեց Ոմորգաք որ ամենայն խոնարհութեամբ Լեւոնէն հաշտութիւն խնդրեց: Այն բլուրը ուրկէց Լեւոն իջեր էր կոչուեցաւ Լեւոնի Բլուր:

Նենգաւոր կայսրը, որպէս զի ուզած ժամանակը կարենայ կոտորուիմը դրժել, փոխանակ Աւետարանի վրայ երդում ընելու, ի մեծ ուրախութիւն միամիտ թշնամիներուն՝ շուներ զոհելով և ուրիշ բարբարոս արարողութիւններով կատարեց երդումը:

Պուկարները եօթանասուն և չորս տարի անշարժ մընացին: Միւս կողմէ Ափրիկէի Ազլապետեաններու հետ դաշնակցելով, Լեւոն ասոնք իբր ամբարտակ գործածեց Աբրասեան Արարներուն դէմ, որոնք կայսրութեան մեծագոյն վըտանդներէն մէկն էին, և ազատեց Սիկիլիոն (816): Մեծն Կարոյտի մահէն իտքը պատուիրակներ ղրկեց Գաղղիա, որոնք բարեկամական նամակներով վերագարձան: Ասանկով խաղաղութիւնը հաստատուեցաւ Հռոմէական կայսրութեան բոլոր կողմերը:

Լեւոն կ'ուզէր գահակից ընել իր Սմբատ որդին, բայց կը վախնար յոյն զօրքերէն, երբ առիթը ներկայացաւ հին զօրքերը պատերազմի ղրկեց և նոր զօրախումբ մը կազմելով մեծ հանդէտով Սմբատի գլուխը կայսերական թագ գրաւ և իրեն գահակից ու յաջորդ նշանակեց զայն Կոստանդին անուանելով:

Պատկերամարտութեան (\*) վէճերը տաստկացած էին Կ.

---

Պատկերամարտութիւն. — Երբ Եկեղեցին հայածանքներէ ազատելով կարող եղաւ տաճարներ շինել ու զանոնք զարդարել, թիւ թիւ սովորութիւն եղաւ, մանաւանդ Արեւիջի մէջ, հաւատացեալներու պաշտամունքին առարկայ ընել Աստուած, Յիսուս, Սուրբերը եւ Մարտիրոսները ներկայացնող արձաններ ու պատկերներ: Այս պաշտամունքը ընդհանրացած էր Արեւելեան բոլոր Եկեղեցիներուն մէջ երբ Լեւոն Գ.

Պալատյ մէջ, Օր մը երբ Լեւոն եկեղեցին էր, Ս. Գրքի ընթերցումովն սա կտորը կարդացուեցաւ. «Արդ ո՞ւմ նմանեցուցէք զՏէր, և որո՞ւմ նմանութեան նմանեցուցէք զնա. միթէ պատկեր կսփեաց զնա հիւսն, կամ ո՞սկերիչ ձուլեաց ոսկի և պատեաց զնա ոսկեով, ի նմանութիւն պատկերի կերպարանեաց զնա » (Իսայի Խ. 19): Քովի գտնուող կրօնաւորները զիտել տուին կայսեր թէ մարգարէն անգամ հաւառակ կը խօսի պատկերներուն:

Լեւոն Ե., որ նախապէս երգում ըրած էր պատկերները յարգել տալ, հրամայեց որ եկեղեցիներէն բոլոր պատկերները վերցուին. կայսրութեան մէջ սարսափելի հալածանք մը հանեց պատկերներուն դէմ, և ո՛վ որ համարձակեցաւ հրամաններուն չհնազանդիլ չարաչար պատժուեցաւ. Նիկիֆոր պատրիարքը (\*) գահընկէց եղաւ և Պրոկոպիա նախկին

Իսաւրացի հրամայեց ջնջել ու արտօքսել բոլոր պատկերները տուներէն ու եկեղեցիներէն. ժողովուրդը իրեն Պատրիարք տնունը տուաւ: Այս մտկոյթով որակուեցան յետոյ Լեւոնի հետեւող կայսրերը. Ասով կ'սկսի Արևելեկան եկեղեցիին մէջ խռովութիւններ ու հայածանցներ որոնք տեւեցին 120 տարի. Լեւոն Գ. ի որդին ու յաջորդը Վաստանդին Վաքրոնիմոս գերագանցեց իր նախորդին թռնութիւնները. 754ին Վ. Պալատյ մէջ գումարուած կամահաճ եկեղ. ժողովի մը վաւերագործել տուաւ պատկերներու արտօքսումը: Լեւոն Գ. ի կարծառել իշխանութենէն ետքը Իրէնէ կայսրուհին 780ին խնամակալուհի կարգուելով, համաձայնեցաւ Քրիզոստ. Բ. եւ Քրիզոստ. Գ. պապերուն հետ, որոնք անդադար բողոքած էին պատկերամարտ կայսրերու թռնութիւններու դէմ. Նիկիոյ տիեզերական ժողովին մէջ (787) հաստատուեցաւ պատկերներու դաւանանքը: Սակայն պատկերամարտութիւնը նորէն գլուխ բարձրացուց Լեւոն Ե. ի (813—820) եւ Թէոֆիլի (820—842) կայսրութեան ժամանակ: Ամբողջովին ջնջուեցաւ Թէոտորա հայազգի կայսրուհիին խնամակալութեան ժամանակ (842—859):

(\*) Նիկիֆոր, Պատրիարք Պալատյ (806—815): Իր ասպարէզը սկսաւ քաղաքական իշխանութեան մէջ, բայց աշխարհէ քաշուելով՝ յաջորդեց Թառասիոս պատրիարքին (806). Երբ Լեւոն Հայկազն սկսաւ պատկերներու դէմ պայքարը, Նիկիֆոր ջերմօրէն պաշտպանեց Օրթոտոքսութիւնը: Իշխանութենէ իյնալով արքայուեցաւ (815 Մայիս). մեռաւ 829ին:

Թագուհիին հետ աքսորուեցաւ Բրօզի կղզին :

Կայս . պալատին Խալքի դրան առջեւ Յիսուսի արձանը մը կար . Լեւոն Ե . պարտաւոր էր օրինակը բարձրէն տալ և պալատէն սխիլ պատկերներու արտաքսումը . բայց Յիսուսի արձանին անհետացումը կրնար ժողովուրդը գրգռել : Ուստի Լեւոն միջոց մը խորհեցաւ . հրամայեց պատկերամարտներուն որ Գրիսաստի արձանը քարկոծեն , և երբ ժողովուրդը՝ գրգռուած՝ կը պատրաստուէր սրբապիղծները ըզքտել , յանկարծ կայսրը երեւցաւ դրան առջեւ ու զայրացած երեւոյթով գոչեց զինուորներուն . « Կոյր էք , չէք տեսներ որ հերետիկոսները ի՞նչ նախատինք կ'ընեն Յիսուսի արձանին . ի՞նչպէս կը հանդուրժէք որ ձեր երկնաւոր Թագաւորը նախատուի : Ծն'ւտ , վերցուցէ՛ք Յիսուսի արձանը , ազատեցէ՛ք հերետիկոսներէն » : Ղինուորները փութացին կատարել կայսեր հրամանը , մինչ ժողովուրդը կը գովէր կայսեր նախանձայուզութիւնը :

Միքայէլ Թլուատ Լեւոնէ դժգոհ մասը իրեն շահելով խորհեցաւ ապստամբութիւն մը հանել , բայց դաւը երեւան ելլելով Թլուատ ձերբակալուեցաւ Մենդեան նախորդ օրը (820) և դատապարտուեցաւ արքունական բաղանեաց վառարանին մէջ ողջ ողջ այրուելու կայսեր ներկայութեան : Թէոդոսիա Թագուհին միջամտեց . « Աստուածամարտ Թագաւոր , գոչեց , չե՞ս վախնար Աստուծոյ բարկութենէն , ի՞նչպէս կը հրամայես որ վաղուան երգերուն հետ մեռնողի մը ձայնն ալ խառնուի » : — « Թէոդոսիա՛ , պատասխանեց Լեւոն , հոգիս կ'ազատես , բայց մարմինս կը կորսնցնես » :

Թլուատին սպանումը յետաձգուեցաւ , բայց Լեւոն մտատանջութենէն ամբողջ գիշերը անքուն անցուց : Ապահով ըլլալու համար թէ Միքայէլ բանտն է , հագաւ զգետները ,

Յունաց եկեղեցին իբր սուրբ կը դաւանի զայն : Գրած է պատկերամարտութեան զէմ երեք կոնդակներ : Իբր պատմաբան հաւաքած է 602էն 769 տեղի ունեցած զէպերը :

ճրագը ձեռքը միայնակ բանա իջաւ . Միքայէլ բարձր տեղ մը քնացած էր, իսկ պահապանները կը խռկային : Կայսրը բարկութենէն դուռը ոյժգին գոցեց ու մեկնեցաւ : Բայց Թէոգիկոսս անգրագարձաւ թէ եկողը կարմիր կօշիկները հագած էր, հետեւաբար կայսրն էր որ բարկացած կը մեկնէր : Իրենց կեանքը ազատելու համար պէտք էին Միքայէլի հետ միանալ ու Լեւոնը սպաննել : Թլուտաւը արթնցուցին խորհրդակցելու համար : «Գնա՛ դուսակիրցներուս ըսէ որ ամէնքն ալ պիտի բերան տամ եթէ զիս չազատեն ու Լեւոնը չըսպաննեն », ըսաւ Միքայէլ Թէոգիկոսսի :

Ծննդեան գիշերն էր . Լեւոն սովորութիւն ունէր լուսուան շարականներուն մասնակցել : Փղոսկրեայ դռնէն անցնելով մատուռ զնաց, Դուրսը սոսկալի ցուրտ մը կը տիրէր, կատաղի մրրիկը կը թափանցէր ամէնուրեք, նոյն իսկ կայսերական եկեղեցիին նրբանցքներուն մէջ : Գիշերն ալ խաւարտչին էր և ճրագներու տարտամ լոյսը հազիւ հազ կը լուսաւորէր : Բոլոր ներկաները, նոյն իսկ կայսրը ցուրտին պատճառաւ գլուխնին դրած էին տեսակ մը լայն վեղար որ կը ծածկէր մինչեւ երեսը :

Հազիւ թէ Լեւոն ժամերգութեան նշանը տուած էր երբ չորս կողմէ սուրբնով զինեալ դաւադիրներ յարձակեցան իր վրայ . ասոնք Միքայէլի կուսակիրցներն էին որոնք կրօնաւորի զգեստին տակ ձգտած մուտ գտեր էին պալատան եկեղեցին : Կայսրը կարճահասակ էր, աշխոյժ և թեթեւաշարժ . խորանին ետին ապաստանած պղնձեայ ոսկեզօծ խաչելութիւն մը բռնելով կը ջանար վրան տեղացող հարուածներուն դէմ դնել : Բայց Լեւոն յոգնեցաւ . տեսնելով հսկայ մը որ ահագին սուրը գլխուն վերեւ կը բարձրացնէ «Գթութիւն» գոչեց, «Վրէժի ատեն է հիմա, պատասխանեց հսկան, և չէ թէ գթութեան » ու մէկ հարուածով վար ձգեց Լեւոնի ուսը, բազուկը և խաչը : Լեւոն Ե. վար ինկաւ յուսահատ մանչիւնով մը . տակաւին ողջ ողջ՝ դաւադիրները յոշոտեցին

անոր անդամները, ձեռքերը, եւ ի վերջոյ գլուխը կտրեցին :

Անսիջապէս յետոյ Միքայէլ Բ. Թլուսառ (\*) եկեղեցի մտնելով Բիւզանդիոնի կայսր պսակուեցաւ : Ասոր հրամանով Թէոդոսիոս կայսրուհին իր չորս մանչ զաւակներուն հետ աքսորուեցաւ Բրոզի կղզին : Մօր ու զաւակներուն հետ նաւակ գրին մորթէ տապրակ մըն ալ որ արին կը բուրէր . ասոր մէջ դրուած էր հայկազն կայսեր յօշոտուած մարմինը, որ մենաստանի մը մէկ անկիւնը թաղուեցաւ : Թէոդոսիոս կուսանոց մտաւ, կայսերազուն իշխանները Միքայէլի հրամանով ներքինացման դատապարտուեցան . կրտսեր որդին չգիմանալով գործողութեան քիչ օրէն մեռաւ, իսկ միւս երեքը նոր անուններ առնելով կրօնաւոր եղան :



Միքայէլ Բ. Թլուսառ

Նիկիփոր պատրիարքը որ Բրոզի կղզին աքսորուած էր, իմանալով լեւոնի մահը, ըսաւ . « Եկեղեցին թշնամիէ մը ազատեցաւ, րայց տէրութիւնն ալ մեծ կայսր մը կորոնցուց » :

Լեւոն Ե. Հայոց հետ ո՛ր և առնչութիւն չէ ունեցած : Իր ժամանակ Հայաստանը կը կառավարուէր Խուզիմա (798—817) և Նօլ (818—834) արաբացի ոստիկաններէն . Կաթողիկոսն էր Դաւիթ Բ. (806—832) :

**Միքայէլ Բ.** Բիւզանդական կայսր (820—829). Ծնած է Փռիւզիոյ Ամօրիում քաղաքը : Բաղդադիւնդիր զինուոր, մեռնտու գտնուեցաւ Լեւոն Հայկազնի զահ բարձրանալուն : Տետոյ անոր դէմ զաւաճանեց, բռնուեցաւ, Լեւոնը սպաննել տուաւ եւ ի վերջոյ զահ բարձրացաւ (819 Դեկտեմբեր) : Գրօնական խնդիրներու քիչ տեղեակ ըլլալով՝ ամէն պաշտամունքի ազատութիւն տուաւ : Ներքին իշխանութիւնը միշտ պղտորեցաւ խռովութիւններով : Եզրիպտական Աբաբ ծրվահէններ զրաւեցին Կրետէն (826) մինչ Ափրիկէի Մուսլիմանները Միկիլիոյ տէր կ'ըլլային (827) :

## Փ Է Ո Վ Ո Ս Ի Ա

[812—820]

Դուռոր Արշալիր կամսարականի — որ Պատրիկ էր եւ  
 Բիւզանդիոնի գանձապետ: — Ամուսնացաւ Լեւոն Հայկազնի  
 հետ երբ տակաւին սա զօրավար էր Հայկական գունդերու:  
 Դուազրութեամբ մը Արշալիր կայսր հռչակուած էր երբ  
 մասնուեցաւ, գանակոծուեցաւ ու աքսորուեցաւ Բիւթանիա  
 (808): Թէոդոսիա գեռ հօրը սուգը աւարտած չէր երբ ա-  
 մուսինն ալ աքսորուեցաւ: Մակայն այս դժբաղդութիւնները  
 կարծես յօրինուած էին իր ապագայ երջանկութիւնը ա՛լ ա-  
 ւելի գեղեցիկ երեւցնելու համար: 811ին Լեւոն զարձաւ  
 աքսորէն և Արեւելքի զօրավար անուանուեցաւ: Սարրաս  
 անուն կրօնաւոր մը կայսրութիւն խոստացած էր Լեւոնի.  
 այդ գուշակութիւնը կատարուեցաւ 813ին, երբ Բիւզանդա-  
 կան բանակը, պարտութիւններէ ձանձրացած, կայսր ընտ-  
 րեց Լեւոն Ե.ը՝ Միքայէլ Ա.ի տեղ: Այն վայրկեանին երբ  
 Լեւոն յաղթական Ոսկեղէն գոնէն Պոլիս կը մտնէր, Միքա-  
 յէլ Ա.ի կինը՝ Պրոկոպիա՝ նախանձէն կատղած նախատինք-  
 ներ կը տեղար թէոդոսիայի դէմ, բարկա անուանելով զայն:  
 Իր ամուսնոյն սպաննուելէն ետքը, Միքայէլ Թլուատի  
 հրամանով քաշուեցաւ Բրօզի կղզին կուսանոցի մը մէջ:



## Ն Ի Փ Ր Ո Ս Ի Ն Է

[822—830]

Ինչպէս տեսանք Եւփրոսինէ աղջիկն էր Մարիանէ հայ-  
 ազգի կայսրուհին և Կոստանդին Զ.ի: Վեց տարեկան էր  
 նրբ մայրը աքսորեցին. երկու տարի ետքը բոլորովին որ-  
 բացաւ երբ Իրէնէ կուրցուց. իր հայրը և զինքն ալ փակեց  
 Բրինջիբօ կղզին վանքի մը մէջ: Փոքրիկ հայուհին որ այն-



քան ընտանեկան գժտութիւններ տեսած էր, սիրով փարեցաւ կեանքի մը որ լիովին կը յարմարէր իր հոգեկան աւրամագրութիւններուն: Կրօնական ուխտերը կատարեց, ընտանեցաւ վանքին մթնոլորտին հետ և երկրաւոր իղձերը՝ գիշերուան վերջին աստղերուն պէս մի առ մի մարեցան իր սրտին մէջ:

Միքայէլ Թլուտտ զբօսանքի օր մը Բրինգիբօ եկաւ: Վանքերը թէեւ փակուած կը մնային ամէնուն առջեւ, բայց կայսրներէ շատեր, անաստելով օրէնքին, յաճախ հոն կուգային գեղեցկութիւններ դիտելու կամ ապահով ըլլալու համար թէ քաղաքական յանցաւոր մը խոյս տուած է: Եւ փրօսինէի զէմքը աւրեց Միքայէլի հոգիէն բոլոր այն պատկերները, զոր տեսած էր իր ընդարձակ պետութեան մէջ: Որոշեց ամուսնանալ հայուհիին հետ, բայց իր Թեկլա կինը դեռ կ'ապրէր և Կոստանդին Զ.ի օրինակը կ'իմացնէր իրեն թէ ապահարզան մը ի՞նչ խռովութիւններ կրնայ յարուցանել Կ. Պոլսոյ մէջ:

Թեկլայի մահը ուրախալի անակնկալ մը եղաւ Միքայէլի համար: Բայց կ'անգիտէր թէ նոյնչափ դժուարին արդելք մը կար Եւփրոսինէի ամուսնութեան. որովհետեւ նէ կատարած էր իր կրօնական ուխտերը: Միքայէլ ուրիշ հնարք մը մտածեց. պիտի ձեւացնէր օղբերգութիւն մը որու գերասանները պիտի ըլլային կայսրը և Մերակոյտի անդամները. ինքը սուգ պիտի ձեւացնէր, անոնք ալ պիտի պաղատէին որ տէրութեան բարւոյն համար երկրորդ անգամ ամուսնանայ: Եթէ թագաժառանգէ զուրկ եղած ըլլար Միքայէլ, դիւրին էր, յանուն հասարակաց բարւոյն կրկին ամուսնութիւն առաջարկել. եկու տես որ արդէն Թէոֆիլ անունով որդի մը ունէր որ դերը կը դժուարացնէր:

— Տէր արքայ, ըսին Մերակոյտի անդամները, Աստուած թագաժառանգ մը պարգեւած է քեզ. երկայն կեանք կը մաղթենք իրեն, բայց եթէ, Աստուած մի՛ արասցէ, յան-

կարձ մահը խլէ զայն մեր ձեռքէն, պետութիւնը որո՞ւ պիտի յանձնենք. պիտի թողո՞ւ որ արքունի ցեղը ջնջուի. թաղաւոր մը միշտ քանի մը որդի պէտք է ունենայ որպէս զի ապագայի հոգերէն ազատ ըլլայ:

— Տէր արքայ, աւելցուցին իշխանները, թագաւորը մարդիկներուն վրայ կ'իշխէ, թագուհին՝ կանանց: Տէրութեան կէտը անաէր մնացեր է, մեր կիները անգլուխ են. գթա՛ մեր այս վիճակին վրայ:

Միքայէլ յայտնեց թէ աշխարհի մէջ միակ կոյս մը կայ, Եւփրոսինէ անուն, զոր կը յիշէր անգամ մը տեսած ըլլաւ Բրինջիբոյի մէջ. նէ միայն թերեւս կարող էր ամուսնութեան յանձնառու ընել զինքը, բայց միւս կողմէն անկարելի պիտի ըլլար Եւփրոսինէն իրեն հարսնացնել, որովհետեւ նէ կրօնական ուխտերը կատարած էր: Անտոն Սիլվեստրի շոգօքորթ ու աշխարհասէր պատրիարքը անմիջապէս արձակեալ հաշակեց Եւփրոսինէն իր կուսական ուխտերէն: Միքայէլ ի վերջոյ պահանջեց որ բոլոր իշխանները ընդունին հետեւեալ պայմանները. — 1. Կայսեր մահուանէն վերջ ալ Եւփրոսինէն կայսրուհի պիտի ճանչնան, 2. Եւփրոսինէի որդիքն ալ գահակից պիտի ըլլան Թէոֆիլի:

Եւ հարսանեկան պատրաստութիւնները սկսան:

Չենք գիտեր ինչ զգաց Եւփրոսինէ, երբ յանկարծ իմացաւ թէ Հռոմէական պետութեան կայսրուհին ընտրուած է (823), ինք անաղարտ պահեց անբիծ հոգին արքունական կեանքի գաւերուն ու ոճիրներուն մէջ: Աւանձնական կեանքին վրայ մանրամասնութիւններ կը պակսին: Չորս տարի կայսրուհի մնաց, երբ Միքայէլի մեռնելովը Թէոֆիլ անոր յաջորդեց, Եւփրոսինէ զայն ամուսնացնելէ յետոյ քաշուեցաւ Բրինջիբո, վայելելու իր անշուք բայց խաղաղ կեանքը: Եւփրոսինէ զաւակ չունեցաւ բնաւ:



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0313314

## DIRECTIONS PÉDAGOGIQUES

expliquer, en Français, les mots nouveaux de  
une leçon par des objets apportés en classe,  
les dessins du livre et par des signes et gestes.

étudier la PARTIE ORALE et ACTIVE au bas  
de la page comme suit :

répéter une phrase ou une question jusqu'à ce  
qu'elle soit bien comprise par les élèves ;

donner des ordres aux élèves et dire ce qu'ils  
font pendant qu'ils exécutent ces ordres ;

à chaque nouvelle question, répondre d'abord à  
la place de l'élève ; répéter ensuite la même  
question pour obtenir la même réponse ;

venir fréquemment sur les mots et les ques-  
tions des leçons précédentes ;

ne pas employer des mots ou poser des ques-  
tions qui n'aient pas été vus auparavant.

écrire sur le tableau noir les mots nouveaux de  
la leçon, les lire et les faire lire. Ne jamais épeler  
à l'aveugle.

ne pas souligner au crayon de couleur l'élément  
de la lecture indiqué au bas de la page.

sur les pages de révision et d'exercices,

inscrire dans chaque rectangle les mots ou la

